Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

17-18 (340-341)
15.06.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Լусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԽՐԱԽՈՒՍՈՒՄ՝ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Կրթության համակարգի նկատմամբ տարեցտարի աճող պետական հոգածության և ուշադրության հերթական վկայություն է առարկայական օլիմպիադաներում բարձր արդյունքների հասած դպրոցականների և նրանց ուսուցիչների՝ ԼՂՀ նախագահի բարձր ընդունելությանն արժանանալը:

Հունիսի 7-ին Նախագահի նստավայրի նիստերի դահլիճում տեղի ունեցավ առարկայական օլիմպիադայի ՀՀ եզարփակիչ փուլում հաղթած և գովասանագրերի արժանացած դպրոցականների ու նրանց ուսուցիչների պարգևատրման արարողություն: Մեծարանքի ու խրախուսանքի արժանացան գիտելիքի կրողն ու սերմանողը:

Ներկա էին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, պատգամավորներ, շրջվարչակազմերի ղեկավարները, կրթության բաժինների վարիչները, դպրոցների տնօրենները և ուրիշներ:

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը շնորհավորանքի առաջին խոսքն ուղղեց աշակերտներին.

- Դուք ցուցաբերել եք բարձր արդյունքներ և պարգևատրվել տարբեր կարգի դիպլոմներով ու գովասանագրերով: Դա, հավանաբար, ձեր կյանքի առաջին լուրջ հաջողություններից է: Ես մաղթում եմ, որ հաջողությունները միշտ ուղեկցեն ձեզ, լինեն անսպառ ու անսահման: Թող այդ հաջողությունները բազմապատկվեն՝ հպարտություն պարգևելով ձեր ուսուցիչներին, ծնողներին և մեզ բոլորիս:

Հանրապետության դպրոցականների հետ նման հանդիպում կայանում է առաջին անգամ, և սա հիանալի նախաձեռնություն է, որն անպայման կունենա իր շարունակությունը և կդառնա բարի ավանդույթ: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, թե ինչ կարևոր տեղ է հատկացվում կրթության և գիտության ոլորտներին մեր ժողովրդի կյանքում: Մենք կառուցում ենք մի պետություն, որտեղ գիտելիքը, կիրթ ու բազմակողմանի զարգացած մարդը պետք է ունենան առանցքային դերակատարություն, և այդ մոտեցմամբ էլ իրականացվում է համապատասխան աշխատանք: Վերջին տարիների ընթացքում գրեթե երկու անգամ աճել են կրթությանը հատկացվող բյուջետային միջոցները, վերանորոգվում են ուսումնական հաստատությունները, կառուցվում նոր դպրոցներ ու մարզադահլիճներ, բոլոր աշակերտներն ապահովվում են անվճար դասագրքերով, դպրոցներում իրականացվում է համակարգչային ցանցի ներդրում: Հայ ժողովրդի կարևորագույն ռեսուրսը նրա ինտելեկտուալ ներուժն է, որը ոչ միայն անսպառ է, այլև ճիշտ օգտագործման դեպքում բազմապատկվում է՝ ստանալով նոր որակ: Հենց մեր ժողովրդի մտավոր կարողությունն է հանդիսանում մեր պետության և նրա տնտեսության զարգացման ու զորացման ամենահուսալի գրավականներից մեկը: Եվ պատահական չէ, որ արվում է հնարավորը՝ ժամանակակից կրթական համակարգ ունենալու համար, որպեսզի մեր երեխաները սովորեն նորմալ պայմաններում, ստանան բարձր գիտելիքներ, քանի որ դուք մեր հարստությունն եք, և ձեզանից է կախված մեր վաղվա օրը, մեր ապագան: Մենք պարտավոր ենք ամեն ինչ անել, որ այդ ապագան լինի հուսալի ձեռքերում: Մեկ անգամ ևս շնորհավորում ենք ձեզ, ձեր ուսուցիչներին, ծնողներին, ովքեր միշտ ձեզ հետ են, ձեր կողքին և օգնում են, որպեսզի կարողանաք հաջողությամբ անցնել ձեր կյանքի այս կարևորագույն փուլը: Վստահ եմ, որ դուք կդառնաք հերոսական Արցախի արժանի քաղաքացիներ և պատվով ու նվիրվածությամբ կծառայեք հայրենի երկրի հետագա զարգացման ու զորացման գործին:

ՀՀ-ում անցկացված դպրոցականների առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլում մրցանակային տեղեր գրաված և գովասանագրերի արժանացած 30 աշակերտների երկրի ղեկավարը հանձնեց արժեքավոր նվերներ:

Նոյեմբերով պարգևատրվեցին 1-ին կարգի դիպլոմակիրները. **Ասյա Առուստամյան** (ռուսաց լեզու)՝ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոց, 12-րդ դասարան, **Նարե Առստամյան** (հայոց լեզու)՝ Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոց, 12-րդ դասարան, նույն դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի **Մերի Սողոմոնյան** (հայ գրականություն), **Ժենյա Հարությունյան** (պատմություն)՝ Ճարտարի հ. 1 միջնակարգ դպրոց, 10-րդ դասարան, **Աննա Արզումանյան** (հայոց լեզու)՝ Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոց, 9-րդ դասարան, **Սերգեյ Հայրապետյան** (ֆիզիկայից՝ 2-րդ, մաթեմատիկայից՝ 3-րդ կարգի դիպլոմ), Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղ, 9-րդ դասարան, Նախնական զինվորական պատրաստություն առարկայից՝ թիմի անդամներ **Լուսինե Առստամյան**՝ Մարտունու հ. 1 միջնակարգ դպրոց, 11-րդ դասարան, **Սաթենիկ Հովսեփյան**՝ Թաղավարդի միջնակարգ դպրոց, 11-րդ դասարան, **Անուշ Բարխուդարյան,** Ասկերանի շրջանի Խնածախի միջնակարգ դպրոց, 9-րդ դասարան, **Լիանա Իսախանյան**՝ Մարտակերտի շրջանի Թալիշի միջնակարգ դպրոց, 10-րդ դասարան, **Անի Հայրիյան, Մանուշ Սիմոնյան**՝ Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոց, 9-րդ դասարան, **Լուսինե Շահրամանյան**՝ հ. 10 հիմնական դպրոց, 9-րդ դասարան:

Նեթբուքով պարգևատրվեցին 2-րդ կարգի դիպլոմակիրները. **Արմինե Հայրապետյան** (աշխարհագրություն)՝ Նորագյուղի միջնակարգ դպրոց, 12-րդ դասարան, **Լիլիթ Հարությունյան** (հայ գրականություն)՝ Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոց, 11-րդ դասարան, **Անի Վարդանյան** (հայ գրականություն)՝ Քաշաթաղի շրջանի Վարդուտի միջնակարգ դպրոց, 10-րդ դասարան, **Վարդանով Տիգրան** (օտար լեզու)՝ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոց, 12-րդ դասարան:

Բջջային հեռախոսով պարգևատրվեցին 3-րդ կարգի դիպլոմակիրները. **Վահե Բարսեղյան** (պատմություն)՝ Ասկերանի շրջանի Այգեստանի միջնակարգ դպրոց, 9-րդ դասարան, **Էլլադա Հայրապետյան** (պատմություն)՝ Խաչմաչի միջնակարգ դպրոց, 11-րդ դասարան, **Արման Գրիգորյան** (ռուսաց լեզու)՝ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոց, 9-րդ դասարան, **Արմինե Հայրապետյան** (մաթեմատիկա)՝ ֆիզմաթ դպրոց, 12-րդ դասարան, **Սիրանուշ Օհանյան** (աշխարհագրություն)՝ Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոց, 12-րդ դասարան:

DVD նվագարկիչ ստացան գովասանագրերի արժանացած **Անահիտ Բաբայանը** (ռուսաց լեզու)՝ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոց, 11-րդ դասարան), **Արշալույս Գրիգորյանը** (հայոց լեզու)՝ Հաթերքի միջնակարգ դպրոց, 10-րդ դասարան, **Գայանե Գրիգորյանը** (կենսաբանություն)՝ Մարտունու շրջանի Հերհերի միջնակարգ դպրոց, 10-րդ դասարան, **Արամ Երեմյանը** (ռուսաց լեզու)՝ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոց, **Դավիթ Հարությունյանը, Սամվել Միրզախանյանը** (ֆիզիկա), **Յուրի Սարգսյանը** (օտար լեզու)՝ ֆիզմաթ դպրոց, 9-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններ, **Լուսինե Մինասյանը** (աշխարհագրություն)՝ Մարտակերտի շրջանի Նոր Սեյսուլանի միջնակարգ դպրոց, 10-րդ դասարան:

Պարգևատրվածների անունից սրտի խոսք ասացին Մերի Սողոմոնյանը և Յուրի Սարգսյանը:

Աշակերտուհին իր երախտագիտությունը հայտնեց ԼՂՀ նախագահ Բ. Սահակյանին՝ հանրակրթական դաշտը մշտապես ուշադրության տակ պահելու և ուսումնական ձեռքբերումները խրախուսելու համար: Նա շնորհակալություն հայտնեց նաև ԼՂՀ և ՀՀ ԿԳՆ նախարարություններին՝ ի դեմս Ս. Ասրյանի և Ա. Աշոտյանի՝ պատշաճ, անկողմնակալ օլիմպիադաների կազմակերպման և բարեկիրթ ու հոգատար վերաբերմունքի համար:

- Այս ընդունելությունը որքան հաճելի, նույնքան պարտավորեցնող է: Եվ խոստանում ու հավաստիացնում ենք, որ թե՛ բուհում, թե՛ մեր հետագա կյանքում միշտ էլ կաշխատենք նույն ոգով և տրամադրվածությամբ,- ասաց Յուրի Սարգսյանը

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի կողմից խրախուսանքի արժանացան նաև 1-ին կարգի դիպլոմակիր աշակերտների ուսուցիչները: 100-հազարական դրամ գումարով պարգևատրվեցին Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի տնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի **Ռոմելա Դադայանը**, հ. 3 միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Կարինե Աթաջանյանը, Բերդաշենի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ **Էլմիրա Գաբրիելյանը** և **Լուսինե Ավանեսյանը,** Ճարտարի հ. 1 միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի **Լուսինե Սաֆարյանը,** ՆԶՊ-ի ուսուցիչներ **Արսեն Հարությունյանը** և **Վարուժան Աղաջանյանը** (ք. Ստեփանակերտ, հ.5 և հ.10 հիմնական դպրոցներ), **Ֆեդյա Ապրեսյանը** (գ. Թալիշ), **Զավեն Բադասյանը** (գ. Թաղավարդ), **Վլադիմիր Բարսեղյանը** (գ. Խնածախ), **Արամ Խաչատրյանը** (ք. Մարտունի, հ.1 միջնակարգ դպրոց):

«Այն պետությունը, որը կրթության համակարգին մեծ տեղ է տալիս, նշանակում է՝ մտածում է իր ապագայի մասին,- հայտնի այս խոսքի մեջբերումով իր ելույթն սկսեց Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի տնօրեն, Աժ պատգամավոր Ռոմելա Դադայանը:- Իհարկե, ամեն տարի մեր աշակերտների մի ստվար խումբ մասնակցում է տարբեր օլիմպիադաների և ամեն անգամ արժանանում խրախուսանքի: Այս անգամ նրանք առավել բարձր խրախուսանքի արժանացան, որի համար՝ խորին շնորհակալություն: Կրթության ասպարեզը մի յուրօրինակ մարտադաշտ է, և այստեղ ևս պայքար կա. գիտելիքի պայքար, համոզմունքի պայքար, ապագայի պայքար, լավ ապրելու պայքար, և համոզված եմ, որ մեր ուսուցիչները կանեն ամեն ինչ, որպեսզի այսուհետ այս դահլիճը քիչ լինի, չտեղավորվեն աշակերտներն ու նրանց ուսուցիչները, և պարտադրված լինեք ավելի մեծ դահլիճում ընդունել նրանց: Առավել քան համոզված եմ, եթե ունենանք կայուն դասագրքեր, կայուն համակարգ, մեր աշակերտներն ամեն ինչ կանեն: Վստահեցնում եմ՝ մեր ուսուցիչները պատրաստ են տալու այն գիտելիքը, որ անհրաժեշտ է ապագայի մարդու ձևավորման համար:

Հպարտության և գոհունակության զգացում կար բոլորի հայացքներում, որն արտահայտեց նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, ով օլիմպիադայի ԼՂՀ հանրապետական փուլի հաղթողներին և նրանց ուսուցիչներին արդեն առիթ էր ունեցել շնորհավորելու և խրախուսանքի արժանացնելու նախարարությունում.

- Մենք բոլորս հպարտ ենք, որ կարողացել եք ՀՀ-ում բարձր պահել մեր կրթական համակարգի պատիվը: Դա, իհարկե, ոչ թե մեկ, այլ նախորդ տարիների ու նաև այս տարվա ձեր նվիրված աշխատանքի արդյունք է: Օլիմպիադաներում պատահականություններ չեն լինում: Կարողանում է հաղթել նա, ով ունի խոր և կայուն գիտելիքներ: Ես համոզված ասում եմ, որ այս երեխաները մեր ապագան են՝ մեր ապագա գիտնականները, մանկավարժները, մյուս ոլորտների մասնագետները: Տարիների փորձը ցույց է տալիս, որ օլիմպիադաներում հաջողություններ ունեցող յուրաքանչյուր աշակերտ կարողանում է հաջողությամբ հանձնել ընդունելության քննությունները, ընդունվել առաջատար բուհեր: Այսօր երեխաների համար բացվել է մի այնպիսի լայն ճանապարհ, որ նրանք արդեն ձգտում են կրթություն ստանալ ոչ միայն Ղարաբաղում, այլ նաև Հայաստանում և արտերկրի առաջավոր բուհերում: Եվ դա՝ պետության որդեգրած քաղաքականության շնորհիվ: Այդ պայմանները որ ստեղծված են, նրանք անպայման պետությանը կփոխհատուցեն լավ մասնագետ դառնալով ու մեր հայրենիքին ծառայելով: Մեր այս ցուցանիշը ձեռքից չենք տա ու տարեցտարի ավելի կբարելավենք:

Դպրոցականների և ուսուցիչների համար անմոռաց հուշ կմնա այս հանդիպումը, որն անմահացավ ԼՂՀ նախագահի հետ առանձին և խմբով լուսանկարվելով:

Հանդիպումից հետո ճեպազրույց ունեցանք օրվա հերոսներից մի քանիսի հետ՝ նրանց ուղղելով այս հարցը՝ «Ինչպե՞ս հասնել հաղթանակի»:

Էլմիրա Գաբրիելյան, ԼՂՀ վաստակավոր ուսուցիչ, որն ամեն տարի օլիմպիադայում հաղթող աշակերտներ է տալիս.

- Սիստեմատիկ, նպատակային, նվիրումով աշխատանքի: Այն պետք է լինի երկկողմանի՝ ուսուցիչների և աշակերտների կողմից: Եթե աշակերտը սիստեմատիկ պարապում է, և ուսուցիչն էլ, աշակերտի հնարավորություններն օգտագործելով, կարողանում է նրան լիարժեք, խոր գիտելիքներ տալ, արդյունքն անպայման երևում է:

- ***Լուսինե Սաֆարյան,*** երիտասարդ ուսուցչուհի.

- Դա անմնացորդ նվիրում է, և հիմքում պետք է լինի սերը: Առհասարակ, երջանկությունը նրանում չէ, որ աշխատում ենք, այլ՝ որ դա սիրով ենք անում՝ անկախ նրանից, թե ինչ ես աշխատում: Եթե սիրով ես անում, ու նվիրում կա, միանշանակ հաջողությունը ակնառու կլինի:

Ժենյա Հարությունյան, աշակերտուհի.

- Ես շատ եմ սիրում գրքեր ընթերցել, նաև՝ ռուս և արտասահմանյան: Արձակուրդներին էլ հանգիստ չունեմ: Պետք է պարապեմ, որ մասնակցեմ հայագիտական առարկաների համահայկական օլիմպիադային, որին կներկայանանք մեր դպրոցի թիմով՝ մեր ուսուցչուհի Լուսինե Սաֆարյանի գլխավորությամբ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀՀ ԿԳՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Օրերս աշխատանքային այցով մեր հանրապետությունում էր ՀՀ կրթության և գիտության նախարարի գլխավորած պատվիրակությունը, որը հանդիպումներ է ունեցել Արցախի օրենսդիր և գործադիր իշխանությունների ներկայացուցիչների հետ:

Հունիսի 10-ին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանին ընդունեց Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Հանդիպմանը, որին ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, պաշտոնատար այլ անձինք, քննարկվեցին Արցախում գիտության և կրթության զարգացմանը և այս ոլորտում երկու հայկական հանրապետությունների փոխգործակցությանը վերաբերող հարցեր:

Երկուստեք նշվեցին համագործակցության լայն դաշտի և հնարավորությունների առկայությունն ու դրանց արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը:

Նախարար Սլավա Ասրյանի ուղեկցությամբ ՀՀ պատվիրակությունը նույն օրն այցելեց Գիշու միջնակարգ դպրոց և մասնակցեց նոր համակարգչային կաբինետի բացման արարողությանը: «Հայաստան» համահայկական հիմնադրամի և Արցախի կառավարության համաֆինանսավորմամբ կառուցված այս կթօջախը երկու երկրների կրթության ոլորտի պատասխանատուներին հյուրընկալում էր առաջին անգամ: Ջերմ ընդունելություն, ապա՝ փոքր շրջայց կրթարանում: Ժամանակակից պայմաններով հագեցած Գիշու միջնակարգի հնարավորություններին ծանոթացրեց դպրոցի տնօրենը: Կրթօջախն ունի ժամանակակից շենքային և որակյալ ուսում ստանալու համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Ֆիզիկայի, քիմիայի կահավորված կաբինետներին ավելացել է ևս մեկը: Նոր համակարգչային կաբինետի բացումը կատարեց ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը: Հենց ՀՀ կրթության և գիտության նախարարի նախաձեռնությամբ դպրոցը նվեր ստացավ 10 համակարգիչ:

ՀՀ նախարարը զրույց ունեցավ ուսուցիչների հետ: Նա հետաքրքրվեց ուսման որակից ու ընթացքից: Իրենց հերթին ուսուցիչները մատնանշեցին որոշ առարկաներում ավելորդ ծանրաբեռնվածությունը: ՀՀ ԿԳ գերատեսչության ղեկավարը դիտարկումներն ու առաջարկություններն ընդունեց ի գիտություն՝ ապագա աշխատանքներում դրանք հաշվի առնելու խոստմամբ:

Գիշու միջնակարգից ճանապարհը հյուրերին տարավ Արցախում առաջին դպրոցը: Ամարասի հինավուրց վանքում հայկական երկու հանրապետությունների կրթության և գիտության ոլորտների ներկայացուցիչներին սպասում էին Արցախի պետհամալսարանի մի խումբ շրջանավարտներ: ԱրՊՀ հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետի ուսանողներն արդեն երկրորդ տարին է՝ այստեղ են ստանում դիպլոմները: Առաջին վկայականի հանձնման պատիվը տրվեց ՀՀ ԿԳ նախարարին: Արմեն Աշոտյանը խոստովանեց, որ տարիների ընթացքում տարբեր տեղերում բազմաթիվ միջոցառումների է մասնակցել, այդ թվում և՝ ուսանողական, բայց երբևէ առիթ չի ունեցել լինել մի միջավայրում, որտեղ միահյուսված են գիտելիքն ու հավատը, որտեղ այսքան շաղկապված լինեին հոգևորը, կրթականը, մշակութայինն ու պատմականը: ՀՀ կրթության և գիտության նախարարը խոստովանեց վառ պահել հիշողություններն այս ջերմ ու անկեղծ միջոցառումից:

Ձևավորված բարի ավանդույթը ողջունեց նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարարը՝ արարողակարգի համաձայն դիպլոմներ հանձնելով շրջանավարտներին: Սլավա Ասրյանը բարի երթ մաղթեց նրանց. «Անկասկած, ձեր ուսումնառության ժամանակ հանդիպել եք դժվարությունների, գուցե և թերացումներ են եղել ձեր և դասախոսների կողմից, բայց որ հանձնել եք պետական որակավորման քննություններ, նշանակում է՝ դիպլոմով արդեն լիարժեք կարող եք մտնել ձեր կյանքի հերթական ուղին»:

ԱրՊՀ հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետի դեկան Հովիկ Մուսայելյանն ասաց, որ անցած տարի է ֆակուլտետում ձևավորվել մտահղացում՝ հանդիսավոր կերպով շրջանավարտների դիպլոմները հանձնել մի համալիրում, որտեղ 1600 տարի առաջ բացվել է հայկական առաջին դպրոցը: Բացի խորհրդանշական լինելուց, այն նաև հայրենասիրության դասեր է տալիս շրջանավարտներին, համոզված են կազմակերպիչները:

Հոգևորն ու կրթականը մերձեցնող միջոցառման ավարտը նույնպես խորհրդանշական էր: ՀՀ կրթության և գիտության նախարարն անակնալ էր պատրաստել ԱրՊՀ ռեկտորի համար: Ստեփան Դադայանի կրծքին Արմեն Աշոտյանն ամրացրեց ՀՀ կրթության և գիտության նախարարության Ոսկե մեդալը:

Սամվել ԲԱԼԱՅԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ՝ ՏՔՆԱՋԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԳԱՍԻՔ

Օրերս Շուշիի Ա. Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջում հանդիսավոր պայմաններում բացվեց ցուցահանդես, որում ներկայացված էին քոլեջի «Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստ» բաժնի սաների գործերը: Ներկա էին Շուշի քաղաքի մտավորականությունը, հյուրեր Արցախի այլ վայրերից:

Բացելով միջոցառումը՝ քոլեջի տնօրեն Արա Հայրապետյանը ողջունեց հավաքվածներին և նշեց, որ ցուցահանդեսում ներկայացված են ուսանողների՝ 2012-2013 ուստարում ստեղծած աշխատանքները: Մասնավորապես ներկայացված են գունանկարներ, գծանկարներ, կոմպոզիցիաներ, գորգեր, կարպետներ, գոբելեններ, մանրանկարներ, դիզայնի գործեր և ձեռքի այլ աշխատանքներ, ընդհանուր առմամբ՝ ութ տասնյակ գործեր:

Շուշիի պատկերասրահի տնօրեն, քոլեջի նույն բաժնի դասախոս, ճանաչված նկարիչ Հովիկ Գասպարյանը նշեց, որ որպես նաև ապագա արվեստագետներ, կրթօջախի սաներին մեծ բախտ է վիճակվել ապրել և ստեղծագործել իրենց հայրենի եզերքում, ինչով և յուրաքանչյուրն իր ներդրումը բերած կլինի երաշխավորված ապագայի և համընդհանուր երջանկության կերտման գործին:

Ողջույնի խոսք ասաց կրթօջախի երկարամյա տնօրեն, Արցախի վաստակավոր մանկավարժ Ալբերտ Խաչատրյանը.

- Ուրախությամբ եմ արձանագրում, որ մեր հարազատ ուսումնական հաստատությունը, հաջողությամբ իրականացնելով ուսումնական գործընթացը, նաև այսպիսի ցուցահանդեսներ է կազմակերպում,- ասաց նա՝ հայտարարելով ցուցահանդեսի բացման մասին:

Ցուցահանդեսը կտևի մեկ ամիս: Նրանում ներկայացված աշխատանքների վերաբերյալ իրենց կարծիքները հայտնելու խնդրանքով դիմեցինք ներկաներից մի քանի հոգու:

Հովիկ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ՀՀ և ԼՂՀ նկարիչների միության անդամ.

- Ասեմ, որ քիչ չեն հետաքրքիր գործերը: Շատ լավ երեխաներ կան, որ ինքնատիպ բնավորություն ունեն: Ուրախությամբ ենք փաստում, որ նրանք գիտեն իրենց անելիքը նաև ազգային արվեստի առումով: Լավ ներուժ կա: Ինչի համար եմ սա ասում՝ հզոր երկիրը պետք է նաև կայացած, ներկայանալի արվեստ ունենա: Ու կարող եմ ասել, որ ներկայիս ցուցահանդեսը հենց այդ լավատեսությունն է փոխանցում:

Զոյա ՆԵՐՍԻՍՅԱՆ, քոլեջի դասախոս.

- Անչափ տպավորված եմ, կեցցեն երեխաները: Բավականին շատ են հետաքրքիր աշխատանքները: Դե ինչ, կարող ենք գոհունակությամբ արձանագրել, որ գործընկերներիս տքնաջան ու հետևողական աշխատանքը այսպես արդյունավետ է: Օգտագործելով առիթը՝ ուզում եմ դիմորդների ուշադրությունը հրավիրել մեր կրթօջախի վրա. այստեղ նրանք կարող են վստահորեն կյանք մտնելու վկայագիր ստանալ:

Սարո ՍԱՐՅԱՆ, հասարակական գործիչ.

- Ուրախության և հուզմունքի պահեր ապրեցի, իհարկե, նաև գեղագիտական հաճույք ստացա: Ցուցահանդեսը մեկ անգամ ևս ապացուցում է, որ Շուշին մեր մշակութային և հոգևոր մայրաքաղաքն է: Այստեղ ներկայացված երեխաներն իրենց արվեստով և իսկապես աներևակայելի մտահորիզոնով ցույց տվեցին այս հրաշալի քաղաքի հսկայական ձգողական ու առինքնող ուժը: Ու պետք է նշել նաև, որ ներկայացված աշխատանքներում զգալի է ստեղծագործողների կողմից հարազատ ժողովրդի ազատատենչության յուրովի պատկերումը: Նաև՝ կարմիր թելի պես անցնում է քրիստոնեության գաղափարը:

Կարեն ՄԻՐԶՈՅԱՆ

ՎԵՐԱԳՏԱԾ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Հա՛յ, ճակատագիրդ հրամայում է մաքառել, ժպտալ արցունքների միջից, ելնել ընկած տեղից ու շարունակել ճանապարհը՝ պատրաստ նորանոր փորձությունների:

Էմմա Ֆահրադյան մարդուն նախախնամությունը սահմանել էր դառնալ իր ազգի ճակատագրի կրողը:

Ծնվել է Չայլու գյուղում, որտեղ բնակվում էին աշխատասեր, հայ հոգին փարած մարդիկ:

Եկան դժնի օրեր: Ինչպես բոլոր համագյուղացիները, նրա ընտանիքն էլ ստիպված եղավ դուրս գալ գյուղից, որովհետև հրասայլերի չդադարող կրակը մահ էր սփռում շուրջբոլորը: Թեև բազմաթիվ դժվարություններ հաղթահարեց, բայց կամոքն Աստծո նոր օջախ ստեղծեց, դուստրերին ու որդուն ուսման տվեց: Այժմ երջանիկ տատիկ է նա: Զբաղվում է սիրած աշխատանքով: Եվ ինչպես հայրենի գյուղում ունեցած քսանհինգ տարիների մանկավարժական աշխատանքի ընթացքում, հիմա էլ լի է չմարող եռանդով, իսկ իր ճշտակատարությամբ, աշխատանքի նկատմամբ հետևողականությամբ, սրտացավ վերաբերմունքով դեպի իր շրջապատը օրինակ է կոլեկտիվի համար:

Շատ ուրախալի է, որ էմմա Ֆահրադյան ուսուցչի և մարդու աշխատանքն ըստ արժանվույն գնահատվեց հանրապետության Նախագահի կողմից. այս տարի նա պարգևատրվեց «Երախտագիտություն» մեդալով:

Շահումյանի շրջանի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոցի կոլեկտիվը շնորհավորում է նրան՝ ծննդյան տարեդարձի կապակցությամբ, մաղթում քաջառողջություն, երկար, բեղմնավոր գործունեություն: Թող որ նրա վերագտած երջանկությունը հարատև լինի:

Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

ԸՆԹԱՑՔ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ Է...

Հունիսի 15-ն է: Միասնական, պետական ավարտական և ավարտական քննությունները շատ առարկաներից արդեն հետևում են մնացել: Քննաշրջանի առումով ասել՝ թեժ ամառ, այսօր կարծես հնաոճ է հնչում: Խոսքը բնավ այն մասին չէ, թե քննությունները հիմա պակաս կարևոր են, այլ՝ որ մեր կյանքում նոր քննակարգի, նոր մոտեցման շնորհիվ այն աստիճանաբար դադարում է կրթական նշանակալից իրադարձություն լինել և պարզապես դառնում է կրթական առօրյայի մաս, բայց՝ կարևոր մաս:

Քննությունների այս ձևը ճի՞շտ է արտացոլում աշակերտի, դիմորդի գիտելիքները՝ հասարակության մեջ դեռ միանշանակ կարծիք չկա: Բայց որ չէին ուզենա վերադառնալ այն ժամանակները, երբ ամբողջ հունիս ամսին դպրոցներում ավարտական քննություններ հանձնելուց հետո մի կարճ ժամանակ անց նորից պետք է քննություններ հանձնեն, այս անգամ՝ բուհ ընդունվելու համար, ինչը լի էր հուզումներով, ապրումներով, կարծում ենք, ոչ մեկը չէր ուզենա:

Այս քննաշրջանն աչքի է ընկնում նրանով, որ բոլոր առարկաներից թեստերը կազմված են շտեմարանների հիման վրա: Մի ժամանակ շտեմարաններին բացասաբար էին վերաբերվում՝ ասելով, որ դրանք չեն նպաստում տրամաբանության զարգացմանը, որ գիտելիքը երեխան ստանում է մեխանիկական սերտողությամբ մտապահելով, ինչը կարճ ժամանակ անց մոռացվում է: Այս հատկանիշներն այսօր էլ պահպանելով հանդերձ, շտեմարանները նաև իրենց առավելությունն ունեն: Հենց թեկուզ նրանով, որ դրանց ներմուծման շնորհիվ թեստերը մեծ մասամբ ձերբազատվել են վիճաբանական առաջադրանքներից, որոնք ծուղակային հարցադրումներ, կրկնակի պատասխաններ, ծրագրից դուրս առաջադրանքներ էին պարունակում և այլն: Գլխավորապես դրանով է պայմանավորված այն, որ մինչև այս քննությունները բոլոր առարկաների թեստերի շուրջ նախորդ տարիների պես աղմուկ չի բարձրացել: Ինչպես նաև՝ արդեն արձանագրվող բարձր միավորները: Համենայն դեպս, ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն Յու. Քարամյանն այդպես է կարծում:

Ներկայացնենք առ հունիսի 15-ը հանձնած միասնական քննությունների արդյունքները.

	ԱՌԱՐԿԱՆԵՐ				
Միավորներ	Ռուսաց լ. և գրակ.	Հայոց լ. և գրակ.	Կենսաբանություն	Աշխարհագրություն	Համաշխ. պատմություն
0 - 7.25	78/24%	173/29%	29/37%	3/10%	6/24%
7.5 – 13-25	188/58%	312/53%	23/29%	18/62%	17/68%
13.5 – 17.25	46/14%	79/13%	12/15%	3/10%	1/4%
17.5 – 20	12/4%	27/5%	15/19%	5/18%	1/4%
Մասնակիցներ	324	591	79	29	26
Բացականեր	4	10	4	0	1

Նախորդ տարվա համեմատ ռուսաց լեզու և գրականություն, հայոց լեզու և գրականություն, կենսաբանություն առարկաների քննությունների արդյունքներում առաջընթացն զգալի է, աշխարհագրությունն ու համաշխարհային պատմությունը գրեթե պահպանել են նույն մակարդակը:

Առաջին անգամ 20 միավոր է արձանագրվել հայոց լեզու և գրականություն առարկայից (2 հոգի): Ավելացել է 17,5-20 միավոր (գերազանց) ստացողների թիվը:

Եթե այստեղ առաջընթացը բացատրվում է ճիշտ թեստեր կազմելու հանգամանքով, ապա կենսաբանություն առարկայի դեպքում, Յու. Քարամյանի տեսակետով, թեստեր կազմողները գնացել են «հոսանքի ուղղությամբ». թեստերն ըստ մասնագետների, շատ հեշտ էին և անգամ չեն համապատասխանել միասնական քննությունների չափորոշիչներին: Արդյունքը բարձր միավորներն են: Այստեղ էլ կան 20 միավոր ստացողներ (2 հոգի): Մի բան, որ նախորդ տարի ոչ միայն չկար, այլև ամենաբարձրը 15-16 միավորներն էին:

Թեստերը չափորոշիչներին չհամապատասխանելու մի վկայություն է և այն, որ կենսաբանություն, աշխարհագրություն առարկաների քննություններից «գերազանցները» գերակշռել են «լավ» գնահատականներին:

Բարդության աստիճանը չի պահպանվել թեստային համակարգում, որպեսզի նաև պահպանվի համաչափությունը լավ և գերազանց գնահատականների միջև:

Քննությունների արդյունքներին անդրադառնալիս սովորաբար առաջինը սկսում ենք կազմակերպչական մասից՝ թե ինչպես է պահպանվել կարգը: Ու ամեն քննության համար և ամեն տարի լսում ենք, որ կազմակերպչական մասով խնդիրներ չեն եղել: Այս խոսքերին գուցե թե այնքան էլ կարևորություն չէինք տալիս՝ մտածելով, որ դա պարտադիր պայման է: Բայց վերջերս Ռուսաստանի կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրվեցին կադրեր ԵԳԷ-ի՝ միասնական քննությունների կարգի խախտման մասին, երբ դիմորդներն անարգել օգտվում էին բջջային հեռախոսներից: Այս փաստը մեծ աղմուկ է բարձրացրել երկրում, և անգամ կասկածի տակ է առնվել քննության արդյունքները ճանաչելը: Հարց է դրվել չեղյալ հայտարարել դրանք և նոր քննություններ անցկացնել: Տեսնելով այս ամենը՝ կրկին համոզվում ենք, թե ինչքան կարևոր է քննությունների անցկացման կազմակերպչական մասը բարձր մակարդակով ապահովելը: Իհարկե, Ռուսաստանի նման հսկա երկրում քննությունները վերահսկելը դժվար գործ է, բայց մյուս կողմից էլ՝ եվրոպական երկրներն էլ պակաս մեծ չեն, որտեղ հիմնականում միասնական քննությունները կազմակերպվում և ընթանում են բարձր մակարդակով, հակառակ պարագայում կարող են առաջ բերել գնահատականների կեղծում, որը գաղտնի մնալ չի կարող՝ տարածվում է աշխարհով մեկ՝ վարկաբեկելով տվյալ երկրի կրթական համակարգը: Ուրեմն՝ խնդիրը մարդկային գործոնի մեջ է, ցանկության, որ քննություններն անցկացվեն անաչառ, անկողմնակալ, արդար:

Ուրիշ երկրների խնդիրը թողնենք մի կողմ: Խոսենք մեր խնդիրներից, ինչը ԳԹԿ տնօրենը չի բացառում: Եվ ամեն անգամ առիթ եղած դեպքում նա բարձրաձայնում է, որ մենք դեռ չենք հասել այն մակարդակին, որ դպրոցում աշակերտը գնահատվի ըստ իր գիտելիքի: Սա էլ պակաս չարիք չէ:

Ուսուցիչն է ամենից լավ իմանում իր աշակերտի իրական մակարդակը: Բայց դրան համապատասխան չի գնահատում: Թե ինչի են հանգեցնում գնահատականների չարաշահումները, շատ պարզ կարելի է տեսնել հատկապես ավարտական քննությունների ժամանակ, երբ ինը տարի շարունակ գերազանց գնահատված աշակերտը չի պահպանում իր գնահատականը: Ոչ միայն չի ստանում գերազանց համարվող 18-20 միավորը, այլև եզակի չեն այն դեպքերը, երբ ստանում են 13 միավոր և անգամ դրանից ցածր: Ծնողների բողոքարկումները ԳԹԿ անխուսափելի են: Շտապենք ասել, սակայն, որ արդյունք չեն տալիս: Գոնե այսքան ժամանակ, ԳԹԿ տնօրենի հավաստմամբ, չի եղել դեպք, որ գնահատական փոխվի: Դրանում կարելի է համոզվել հենց թեկուզ այն փաստով, որ հիմնական դպրոցն ավարտողների մեջ արդեն հազվադեպ են հատուկ նմուշի վկայական ստացողները: Պատկերացնել կարելի է երեխայի, ծնողի հիասթափության աստիճանը, երբ նման փաստի առաջ են կանգնում: Ամբողջ ինը տարվա արդյունքը մի քննությունից միանգամից ջուրն է թափվում:

ԳԹԿ տնօրենը սրանում միայն ուսուցչին է մեղադրում: Նրա արարքը «հանցանք» բառով որակելը խիստ է, իհարկե, բայց ի վերջո, երբ իրենց խաբված են զգում աշակերտը, ծնողը, ինչը հանգեցնում է սթրեսների՝ իր բացասական հետևանքներով, ակամայից այդ մտքին ես հանգում:

Հասարակությունն էլ վերջապես պետք է գիտակցի, որ գլխավորը գիտելիքն է, ոչ թե գնահատականը: Ի վերջո, մարդ գիտելիքն է իր հետ տանում, ոչ թե գնահատականը: Համոզված ենք, այդ ժամանակներն էլ կգան: Եվ երբ դպրոցի գնահատականն այլևս կասկած չի հարուցի, գուցե ընդհանրապես վերանան քննությունները: Բայց այսօր դեռ այն կա, և պետք է կազմակերպվի ու վերահսկվի օրենքի տառին համապատասխան:

ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնը այս օրերին յուրատեսակ շտաբի է վերածվել: Միասնական քննությունների անցկացմանը զուգահեռ՝ պետք է ստուգվեն նաև 9-րդ դասարանների կենտրոնացված երկու՝ հայոց լեզու և գրականություն և մաթեմատիկա առարկաների քննությունների գրավոր աշխատանքները: Այստեղ նույնպես խստապահանջության նույն օրենքներն են գործում.



Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲԱՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ՍԵՓԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ ԱՄԵՆԱԼԱՎ ՄԵԹՈԴՆ Է ՈՒՍՈՒՑՄԱՆ

Հունիսի 1-ը՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը, հատկանշվում է ոչ միայն մեծերի՝ փոքրերին արված նվերներով, այլ նաև, թե ինչպես են աշխատում նրանց համար: ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից նախադպրոցական հաստատությունների դաստիարակչուհիների միջև այդ օրը կազմակերպվող «Հմուտ ձեռքեր» ամենամյա մրցույթը հենց այդ նպատակն է հետապնդում:

Օրվա առթիվ Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում առավոտվանից աշխուժություն էր տիրում: Մայրաքաղաքի և շրջանների շուրջ քսան մանկապարտեզների դաստիարակչուհիներ իրենց ձեռքի աշխատանքներն էին ցուցադրում: Ու ոչ միայն ցուցադրում: ԼՂՀ ԿԳՆ նախադպրոցական և արտադպրոցական բաժնի պետ Ժաննա Այվազյանի խոսքերով՝ այս տարի նորամուծություն են մտցրել մրցույթի կարգում. դաստիարակչուհիները ներկայացրած գործերի հետ միասին նաև տեղում կատարում էին այդ աշխատանքները, որպեսզի հանրապետական գնահատող հանձնաժողովը և առհասարակ, ներկաները համոզվեն, որ դրանք, իրոք, նրանց ձեռքի աշխատանքն է:

Երկու ժամ շարունակ Մշակույթի պալատի ճեմասրահը յուրօրինակ արվեստանոցի էր վերածվել: Մանկապարտեզների դաստիարակչուհիները խումբ-խումբ կամ առանձին իրենց հատկացված սեղան-տաղավարներում եռանդուն գործի էին անցել: Ինչ նյութերով ասես որ նրանք չէին աշխատում. ներկերը, մատիտները, սոսինձն ու կերպարվեստի մյուս նյութերը ամենավերջին ատրիբուտներն էին. հիմնականը բնական նյութերն էին՝ բրինձ, ոսպ, հնդկացորեն, մակարոն, արևածաղկի սերմ, կոճակ, ուլունք, թուղթ, ոստեր, կավ, պլաստիլին, պլաստիկ շշեր, անպետք իրեր, որ սովորաբար դեն ենք նետում… բոլորը հնարավոր չէ թվարկել: Դրանք դաստիարակչուհիների վարժ ու հմուտ ձեռքերի տակ վերածվեցին գեղեցիկ իրերի, հուշանվերների: երկաները հիացած էին փոքրիկ այդ ցուցահանդեսով, դաստիարակչուհիների երևակայությամբ: Նրանք կոմպոզիցիաներ ստեղծեցին հին ու նոր Արցախի մասին, որն էլ մրցույթի թեման էր: Գնահատող հանձնաժողովի անդամներն անցնում էին սեղանների մոտով և նշումներ անում: Նրանց համար, իրոք, դժվար էր ընտրություն կատարել:

Մրցույթի արդյունքների ամփոփումը կատարվեց կրթության և գիտության նախարարությունում: Գնահատող հանձնաժողովի եզրակացության հիման վրա որոշվեցին մրցանակային տեղերը, և կատարվեց պարգևատրման արարողություն ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի կողմից:

Մրցանակային առաջին պատվավոր տեղը բաժին հասավ Բերձորի մանկապարտեզին և անհատական՝ Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզի վաստակաշատ դաստիարակչուհի Ռոմելա Իսախանյանին: Երկրորդ տեղը զբաղեցրին Ստեփանակերտի հ. 1 պետական և «Սոսե» մանկապարտեզները, երրորդ տեղը՝ Ասկերանի Հայ ավետարանչական ընկերակցության (ՀԱԸ) և Ստեփանակերտի հ. 3 պետական մանկապարտեզները: Նրանք պարգևատրվեցին նախարարության դիպլոմներով և դրամական պարգևով:

Մի շարք մանկապարտեզներ հաղթող ճանաչվեցին տարբեր անվանակարգերում. Մարտունու հ. 1 և հ. 2 պետական մանկապարտեզները՝ «Արցախյան ծիածան» և «Արցախյան հորովել», Շուշիի «Սոսե»՝ «Իմ արմատները», Ստեփանակերտի հ. 2 պետական և ՀԱԸ՝ «Հոգևոր Արցախ», «Գույների աշխարհ», Մարտակերտի հ. 1 պետական մանկապարտեզները՝ «Արցախյան բնաշխարհ» անվանակարգերում: Նրանք պարգևատրվեցին նախարարության պատվոգրով և հուշանվերներով:

Ակտիվ մասնակցության համար նախարարության պատվոգրին արժանացան Ասկերանի շրջանի Խաչենի և Խնապատի պետական, Շուշիի ՀԱԸ և Քարին տակի պետական, Մարտակերտի ՀԱԸ և Հադրութի շրջանի Մեծ Թաղերի «Սոսե» մանկապարտեզները:

Շնորհավորելով պարգևատրվածներին՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը միաժամանակ շնորհակալություն հայտնեց նրանց՝ ասելով. «Արդյունքները վկայում են ձեր նվիրված աշխատանքի ու նաև այն մասին, որ ձեր կարողություններով և հմտություններով կարողանում եք զարգացնել փոքրիկների ստեղծագործական կարողությունները և նրանց մեջ սեր առաջացնել կերպարվեստի, նկարչության և առհասարակ, գեղեցիկի նկատմամբ: Սեփական օրինակը ամենալավ մեթոդն է ուսուցման»: Նախարարը մատնանշեց նրանց աշխատանքը նաև կրթության մյուս ուղղություններով, այն, որ նախնական կրթական պահանջները ձևավորվում են մանկապարտեզում, և այդ գործում մեծ է դաստիարակների ճիշտ աշխատանքը: Այդ առնչությամբ նախարարն անդրադարձավ պետական քաղաքականությանը: Նշելով, որ քիչ բան չի արվել հետպատերազմյան շրջանում նախադպրոցական ցանցի վերականգնման ուղղությամբ, Ս. Ասրյանը հավաստիացրեց, որ հարցը այժմ էլ գտնվում է իշխանությունների ուշադրության կենտրոնում: Մանկապարտեզների պահանջարկը մեծ է ոչ միայն մայրաքաղաքում, այլև բոլոր համայնքներում: Նա տեղեկացրեց, որ ներկայումս ութ մանկապարտեզների շինարարական աշխատանքներ են ընթանում: Բայց մինչև ցանցի լիարժեք վերականգնումը հետևյալ քաղաքականությունն է մշակվել. հինգ տարեկան երեխաներին ընդգրկել դպրոցներին կից նախապատրաստական խմբերում և ստեղծել մանկապարտեզային պայմաններ, որպեսզի նրանք կարողանան անհրաժեշտ նախադպրոցական կրթություն ստանալ:

Դաստիարակչուհիների աշխատանքի մի վառ ներկայացում էր օրվա երկրորդ կեսին Մշակույթի պալատում կազմակերպված համերգը մայրաքաղաքում գործող մանկապարտեզների երեխաների մասնակցությամբ, որն իրենց ծնողների հետ նայելու էին եկել հասարակության փոքրիկ և ամենագեղեցիկ անդամները:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ ԷԻՆ ՓՈՐՁԱՌՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ

Երբ թելադրողը մանկավարժի երկարամյա գործունեության ընթացքում բյուրեղացած կենսափորձն է, ակնկալիքներն, անշուշտ, մեծ են: Իսկ երբ այդ կենսափորձին գումարվում են անխոնջ պրպտումը և գիտելիքների նորովի մատուցումը, արդյունքն ավելի քան գոհացուցիչ է:

Անցած ամիսն այս առումով Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջում յուրօրինակ էր: Իրար հաջորդելով՝ դաս-միջոցառումներ էին կազմակերպել քոլեջի երկու բազմավաստակ մանկավարժներ՝ ռուսաց լեզվի դասախոս Նինա Ազիրյանը և մաթեմատիկայի դասախոս Նաիրա Պողոսյանը: Երկար տարիների մանկավարժական գործունեությունը, չխաթարելով մարդու և մանկավարժի մարդկային բնութագիրը, ընդգծել է նրանց ապրելու և գործելու կերպը: Նաիրա Պողոսյանը (ուսումնադաստիարակչական գծով երկարամյա փոխտնօրեն) նախանձելիորեն համակված է դիմացինի մեջ առաջին հերթին լավը տեսնելու և գնահատելու, նկատած թերությունն աննկատ ուղղելու մեծահոգությամբ: Նինա Ազիրյանը՝ չափից դուրս համեստ, կիրթ և հավասարակշված, նույնը՝ նույնիսկ ամենադժվար դաստիարակվող ուսանողի հետ:

Հեռու լինելով մեկը մյուսի կրկնությունը լինելուց՝ յուրաքանչյուր դաս կրում էր իր առարկայի բնութագրի կնիքը: Առաջինում գեղարվեստի խոսքն էր, երբեք չխամրող գեղարվեստականությունը, երկրորդում՝ մաթեմատիկական ճշգրտությունը և սեղմության լեզուն:

Մաթեմատիկայից բաց դասը «Դասավանդում տարրական դասարաններում» բաժնի 2-րդ կուրսում էր: Դա համագործակցային դաս էր: Արդեն երրորդ տարին է՝ քոլեջում հաջողությամբ իրականացվում է մոդուլային ուսուցում: Այս դասը մոդուլով նախատեսված արդյունքներից մեկի մի յուրօրինակ քննություն էր նաև, որը հավաստեց ուսուցման այս ձևի արդյունավետությունը:

Նախ, ուսանողները ներկայացրին մեկական երկրաչափական մարմին, որն իրենք էին պատրաստել որպես տնային հանձնարարություն: Այնուհետև կուրսը բաժանվեց երեք խմբի: Յուրաքանչյուր խմբից մեկ անդամ փակ ծրարով քաշեց երկրաչափական մարմնի կամ պատկերի անուն, որով կոչվեց խումբը՝ պտտման մարմիններ, եռանկյուն, բազմանկյուն: Յուրաքանչյուր խմբի համար հայտնի դարձավ նաև այն սեղանիկը, որի վրա դասավորված երկրաչափական պատկերները պետք է ներկայացնեին իրենք: Հատկացված 3-4 րոպեների ընթացքում ուսանողները երևան հանեցին երկրաչափական մարմինների մասին ունեցած իրենց գիտելիքները: Ստացվում էր մի տեսակ պատասխան-հավելում, երբ ուսանողները հնարավորություն ունեին ընթացքում ավելին հիշելու և պատասխանելու: Այս և հաջորդ առաջադրանքների ժամանակ թիմի յուրաքանչյուր անդամի գնահատում էր խումբը, իսկ խմբին՝ դիտողները: Այնուհետև խմբերը պատասխանեցին բլից-հարցերին, որոնք կազմված էին երեք տարբերակով, յուրաքանչյուրում՝ 30 հարց, որոնց մեջ ընդգրկված էին նաև հարցեր նախորդ արդյունքներից: Հատկացված էր մեկ րոպե ժամանակ: Հաջորդ առաջադրանքը հետամտում էր ուսանողների գործնական ունակությունների ու կարողությունների ստուգման նպատակ: Նույն սկզբունքով ընտրված հարցաթերթիկների համաձայն՝ ուսանողները հաշվեցին երկրաչափական մարմինների լրիվ մակերևույթի մակերեսը և ծավալը:

Վերջին հանձնարարությունը մաթեմատիկական ռեբուսի լուծումն էր, պահանջը՝ վերծանել բառը: Ի լրումն այս ամենի՝ ուսանողները դասի վերջում ներկայացրին ռեֆերատներ, որոնք պարունակում էին հարուստ տեղեկություններ երկրաչափական մարմինների մասին, սակայն ոչ թե մաթեմատիկայի բնագավառում, այլ իրական աշխարհում: Մասնավորապես, ներկայացվեցին «Բազմանիստերը բնության մեջ, կենդանական աշխարհում, ճարտարապետության մեջ» թեմաները:

Մաթեմատիկայի լուրջ դասը, ինչպիսին սովոր ենք տեսնել հաճախ, այս անգամ նման ստեղծագործ մոտեցմամբ՝ աշխույժ էր, հագեցած, շատ բան ասող:

Ռուս գրականությունից դասմիջոցառումը ոչ թե համագործակցային էր, այլ՝ համագործակցություն: Մի կրթջախում, ուր աշխատում են երաժիշտը, նկարիչը, ձևավորողը…, համագործակցությունը դյուրին է ու ինքնըստինքյան: Դասը նախաձեռնել էր Նինա Բախշիևնան: Այն նվիրված էր ռուս մեծ դասականի՝ Մ.Յու. Լերմոնտովի ծննդյան 200-ամյակին: «Չնայած Լերմոնտովի 200-ամյա տարեդարձին դեռ մնում է մեկ տարի, ես շտապել եմ իմ սիրած բանաստեղծին ներկայացնել իմ սիրելի կուրսի հետ: Նրանց, ցավոք, մյուս տարի չեմ դասավանդելու». սա «Թարգմանություն և գործավարություն» բաժնի 3-րդ կուրսի մասին է ասված: Բայց, ով գիտե, քանի՞ այսպիսի սերնդի մասին է սրտի նման թրթիռով ու խանդաղատանքով խոսել նա:

Լսարանի ձևավորումն արդեն իսկ տրամադրող էր: Հանճարեղ, հավերժ երիտասարդ բանաստեղծի լուսանկարը, ստեղծագործությունների հատորները, վառվող մոմերը, փետրազարդ գրիչը, ձեռագրերի վրա մտամփոփ կքած ուսանողը, դասական երաժշտությունը ստեղծել էին ակնկալվող մթնոլորտը:

Դա իսկական կարոտախտ էր, երբեք չհագեցող հետաքրքրություն՝ մեծ բանաստեղծի նկատմամբ, անհագուրդ ցանկություն՝ բացահայտելու այն հեռավոր ժամանակների էությունը, երբ մարդկային արժանապատվության բարձրագույն դրսևորումն արտահայտվում էր անհեթեթությամբ՝ մարտահրավերով:

Իր իսկ բանաստեղծությունների միջոցով ներկայացված Լերմոնտովի դժբախտ մանկությունը, կենսագրության մանրամասները շոշափելիորեն ակնհայտ դարձրին այն գեղեցիկ թախիծը, որ այնքան լերմոնտովյան է: Մտածող անհատի ապրումներն ու խոհերը ոչ թե հնչում, այլ քաղցրալուր ծորում էին ուսանողների շուրթերից: Այո, եղել են ժամանակներ, եղել են մարդիկ: Նրանց մասին կարոտով ու անթաքույց հիացքով են խոսել հաջորդ սերունդները: Այդպես պանծացրել է Լերմոնտովը՝ Պուշկինին, այդպես այսօր հոգու ամբողջ էությամբ հասկանում ու գնահատում է Լերմոնտովին գեղարվեստի խոսքի հարգն իմացող ամեն մարդ:

Վերջում ժամանակաշրջանի պատկերն ամբողջացնելու եկան դասական պարերը, որով հանդես եկան ուսանողները:

Լարիսա ՄԻՆԱՍՅԱՆ
Շուշիի Ա. Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի «Զբոսաշրջություն» բաժնի 2-րդ կուրս

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇԱԿԵՐՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցումն ուսուցչի և աշակերտի առողջ փոխհարաբերությունների նպատակաուղղված գործընթաց է, որի զարգացման յուրաքանչյուր փուլ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում) միանշանակ մեծ ազդեցություն է թողնում կրթության որակի և մակարդակի բարձրացման վրա: Այդ փոխհարաբերությունների մեջ առաջնակարգ դեր ունեն հոգեբանական մոտեցումները, երբ ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների մեջ պահանջվում է երկկողմանի հարգանք: Այսինքն՝ ոչ միայն աշակերտը պետք է հարգի ուսուցչին որպես մարդ և մասնագետ, այլև ուսուցիչն աշակերտին պետք է վերաբերվի որպես անհատի, այլ ոչ թե միայն դասավանդվող սուբյեկտի: Նմանատիպ մոտեցում պետք է ցուցաբերվի սկսած առաջին դասարանից, որն էլ հենց որոշում է կրթության որակի աստիճանը: Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների մեջ հոգեբանական մոտեցումները հանգամանորեն ներկայացնում եմ կոնկրետ դասապրոցեսի ընթացքում: Օրինակ՝ «Նյարդային համակարգի հիգիենան» անցնելիս ուսուցիչներս «Մտքերի տարափ» մեթոդով նախ ակտիվացնում ենք աշակերտներին: Ուղղորդող հարցը գրում ենք գրատախտակին («Նյարդային համակարգի վրա ազդող ինչ գործոններ գիտեք»), որից հետո լսում և գրում ենք յուրաքանչյուր աշակերտի պատասխանը: Մտքերի շատ ու ազատ արտահայտություններ կարող են հնչել միայն այն ժամանակ, երբ չկա քննադատություն, այսինքն՝ ցածր գնահատական, քմծիծաղ, ինչպես նաև կողմնապահություն: Մենք երբեմն մոռանում ենք, որ աշակերտը շատ ավելին է տեսնում և հասկանում, քան մենք պատկերացնում ենք: Չպետք է անտեսենք որևէ աշակերտի պատասխան կամ էլ գրի առնելուց հոնքերը կիտենք, ուսերը բարձրացնենք և այլն: Այսինքն, սկզբնական՝ խթանման փուլում, շեշտը պետք է դնենք ոչ թե լսված ճիշտ պատասխանների, հետևաբար և, մտքերի որակի, այլ մտքերի քանակի վրա: Պետք է խրախուսենք շատ և բազմատեսակ մտքեր արտահայտելը: Դա աշակերտների մոտ համարձակության դաստիարակության առաջին քայլն է, որը տանում է ինքնահաստատման զարգացման: Նման գործունեությունից հետո անվստահ աշակերտը հնարավորություն է ստանում քննարկել արտահայտված մտքերը՝ սեփական տեսակետները հայտնելու միջոցով: Այս ամենը նպաստում է աշակերտի մոտ լիարժեքության զգացողության, առողջ հոգեբանության և հասարակության մեջ լիիրավ անհատի ձևավորմանը: Եթե աշակերտը մեր վերաբերմունքի մեջ զգում է անկեղծ հարգանք իր պատասխանի, հետևաբար նաև, իր անձի հանդեպ, ապա նրա մեջ սկսում է ձևավորվել, զարգանալ պատասխանատվության զգացում: Օրինակ՝ նույն թեմայի իմաստի ընկալման փուլում գրատախտակին ուսուցիչը գծում է T-աձև աղյուսակ և լրացնելու համար գրատախտակի մոտ է կանչում անվստահություն, անհամարձակություն ցուցաբերող աշակերտի: Աշակերտը պետք է տարբերի նյարդային համակարգի վրա ազդող գործոնները և դրանցից առանձնացնի դրականն ու բացասականը: Աշակերտն անվստահ է իր ճիշտ գիտելիքների նկատմամբ և դժվարանում է ընտրության մեջ: Մեր մանկավարժական հմտությունը դրսևորվում է նման դժվար իրավիճակներում, քանի որ մի թեթև սխալ քայլը կարող է որոշել աշակերտի մեջ սովորելու հանդեպ ցուցաբերած վերաբերմունքը: Այս իրավիճակում մենք ժպիտով և խրախուսական հայացքով նախ պետք է աջակցենք աշակերտի երերուն պատասխանին, հետո նրբանկատորեն օգնության կանչենք դասարանի աշխույժ աշակերտներին, բայց պետք է այնպես անենք, որ աշակերտը դա ընդունի որպես ընկերոջ օգնություն, որի մեջ վատ բան չկա: Այս մթնոլորտում նման աշակերտներն ավելի համարձակ են դառնում՝ վստահ լինելով, որ իրենց չեն ծաղրի կամ նախատի: Մեր կողմից ցուցաբերված նման մոտեցումը հանգեցնում է նրան, որ աշակերտի մոտ սկսում է ամրապնդվել վստահություն դեպի դասավանդող ուսուցիչը, դեպի մեզ: Ղ. Աղայանը «Պարտավորություն վարժապետանց» հոդվածում հատուկ ուշադրություն է դարձրել ուսուցչի հեղինակությանը: Նա ընդգծել է, որ ուսուցչի հեղինակությունը պետք է դիտել իբրև աշակերտի անձնավորության դաստիարակչական ներգործության հատուկ ուժ: Հեղինակավոր ուսուցիչը մեծ վստահություն է վայելում սովորողների կողմից: Նրա խոսքերը, վարմունքը, ժեստերը և նույնիսկ դիմախաղը սովորողների կողմից ընկալվում են իբրև որոշակի գործողությունների կամ դրանց կասեցման ազդակ: Այս վստահությունը կարևոր խթան է կրթական համակարգում ճիշտ ուսուցման համար: Այսինքն՝ փուլային ուսուցումը, որի ընթացքում աշակերտը ձեռք է բերում գիտելիք, հմտություն և կարողություն, դառնում է արդյունավետ, վստահությունը վեր է ածվում համարձակության: Դա նպաստում է տվյալ թեմայի շուրջ աշակերտների ինքնուրույն, հստակ արտահայտվելուն: Նման իրավիճակում աշակերտը ոչ միայն սկսում է հանգիստ արտահայտվել, այլև լրացնել ընկերների մտքերը, հակադրվել ընկերներին՝ ավելի ամրապնդելով տվյալ ուսուցանվող նյութի հիմնական գաղափարները: Նույն թեմայի իմաստի ընկալման փուլում «Ուղղորդող ընթերցանություն» մեթոդով մենք աշակերտին հանձնարարում ենք կարդալ դասի համապատասխան պարբերությունը, որից հետո բաժանում ենք T-աձև աղյուսակները և պահանջում դրանք նախ լրացնել անհատապես, հետո քննարկել զույգերով, վերջում՝ խմբերով: Նման աշխատանքն անհատական մոտեցումից աշակերտներին համախմբում է խմբային համակարգ, որտեղ սկսում է զարգանալ խմբի անդամների դրական փոխկապակցվածությունը, խմբի ներսում և խմբերի անդամների միջև դեմ առ դեմ փոխազդեցություն և վերջապես անհատական հաշվետվություն և պատասխանատվություն ինչպես սեփական, այնպես էլ ամբողջ խմբի համար: Նույն թեմայի կշռադատման փուլում դասարանը բաժանում ենք երեք խմբի և յուրաքանչյուրին տալիս համապատասխան աղյուսակը:

Աղյուսակ 1.
Վնասակար գործոնների ազդեցությունը նյարդային համակարգի վրա

Վնասակար գործոն	Ազդեցություն նյարդային համակարգի վրա	Կանխարգելում
Հոգնածություն (ֆիզիկական և մտավոր)		
Մենդում օրգանական նյութերի պակաս		
Գրիպ		
Պոլիոմիելիտ		

Աղյուսակ 2.

Ծանր մետաղների ազդեցությունը		
Ծնրանյութեր		
Թույներ		
Բացասական հույզեր		
Ակտիվ		

Գլխուղեղի բաժինները	Վնասվածքների հետևանքը
Մեծ կիսագնդերի կեղև Ծոծրակային բլթ Քունքային բլթ Կեղևի կենտրոնական մաս	
Ուղեղիկ	
Երկարավուն ուղեղ	

Արդյունքում սովորողը սկսում է հետևել իր վարքին և դասերի պատրաստվածությանը: Միևնույն տարիքի երեխաներն իրարից տարբերվում են բարձրագույն նյարդային համակարգի գործունեության տիպաբանական առանձնահատկություններով, բնավորության գծերով և այլն: Անհատական մոտեցումը մեզանից պահանջում է աշակերտի բարդ ներաշխարհի ուսումնասիրություն և այն պայմանների վերլուծություն, որոնց մեջ տեղի է ունեցել նրա զարգացումը: Անհատական դաստիարակչական աշխատանքը հաճախ տարվում է ոչ թե նրանց հետ, ովքեր դուրս են մնում կոլեկտիվից ու հակադրվում են նրանց, այլ, ինչպես Ա. Մակարենկոն է գրում. «Մենք սպասում ենք, որ աշակերտը կատարի այս կամ այն զանցանքը, որից հետո սկսում ենք դաստիարակել նրան: Այն աշակերտը, որ զանցանք չի կատարել, մեզ չի զբաղեցնում. ու՛ր է նա գնում, ինչ բնավորություն է զարգանում թվացող կարգին արտաքինի տակ մենք չենք իմանում և իմանալ չենք կարողանում»: Ուրեմն՝ պետք է դաստիարակենք, տեսնենք բոլորին: Դասարանը կազմված է ոչ թե մեկ, այլ շատ անհատ աշակերտներից, որոնցից յուրաքանչյուրը զգում և իր հանդեպ պահանջում է նմանօրինակ վերաբերմունք: Մեր՝ մանկավարժի հմտությունն ու մեծությունը որոշվում է նրանով, թե քանի այդպիսի անհատ աշակերտների հետ մենք կարող ենք աշխատել, ինչպես նաև այդ անհատներին խմբավորել որպես մեկ ամբողջություն՝ նպաստելով առողջ կոլեկտիվի ձևավորմանը: Նմանատիպ գործունեությունը կոլեկտիվի ներսում բերում է ինքնավերադաստիարակման զարգացմանը, բարձրացնում դասարանի կրթության որակը: Ձևավորված կոլեկտիվը փորձում է տարբերվել շրջապատից, դառնալ լավագույնը, քանի որ ուսուցման գործընթացում ձեռք բերած գիտելիքները ստիպում են խմբի անդամներին զբաղվել ինքնակրթության բարձրացմամբ: Ինքնակրթությունը արվեստի, գիտության, սոցիալական, բարոյագիտական, հայրենասիրական ոլորտների ճանաչողության սահմաններն են (ցանկանում է դառնալ լավագույնը): Այսքանը բավական է, որ մենք համարձակ, որպես տնային առաջադրանք հանձնարարենք հետևյալը. օգտվելով տեղեկատվության տարբեր աղբյուրներից՝ հավաքեք լրացուցիչ տեղեկություններ նյարդային համակարգի հիգիենայի վերաբերյալ:

Հեղինե ՍԱՀԱԿՅԱՆ
Բերձորի Վ. Ջափիկյանի անվան հ. 2 միջն. դպրոց

Շնորհավորանք

ԽՈՍՔ Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

Ուսուցչի վեհ ու աստվածահաճո գործին նվիրված յուրաքանչյուր ոք արժանի է ամենօրյա ուշադրության, գնահատման ու մեծարման: Առավել ևս, այն մանկավարժները, ովքեր ողջ էությամբ ու անմնացորդ նվիրված լինելով իրենց գործին, մոմի նման սպառում են իրենց՝ լույս ու ջերմություն տալով սաներին: Նրանցից մեկն է Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի տարրական դասարանների գծով տեսուչ Սիրվարդ Թամազյանը: Նա սեր ու հարգանք է վայելում շրջապատում, որ վաստակել է իր բարեխիղճ աշխատանքով, ընկերասիրությամբ, բոլորի կողքին լինելու, օգնելու բարի կամքի դրսևորմամբ:

32 տարի առաջ տիկին Թամազյանը մտել է դպրոց և ամուր կապվել նրա հետ: Տարիների հետ այդ կապն ամրացել ու խորացել է: Տարիները նրան պարգևել են փորձ և հմտություն: Լուսավոր ու պայծառ է տեսուչ-ուսուցչի աշխարհը: Մանկավարժներիս հանդեպ տածած սիրով ու նվիրումով է նա ձեռք բերել այդ սերն ու վստահությունը:

Միշտ աշխատանքային եռուզեռի, ստեղծագործական որոնումների մեջ է նա: Բարու և գեղեցիկի հունդերը, որոնք նա սերմանում է անմնացորդ, տվել են իրենց բարի պտուղները: Բնավորությամբ լինելով համեստ՝ նա իրեն վստահված գործը կատարում է ամենայն բարեխղճությամբ և նույնպիսի պատասխանատվություն է ակնկալում նաև մեզանից՝ դասվարներից: Մանկավարժական բեղուն աշխատանքի նրա անցած ուղին երկար է, որը, սակայն, հարթ ու դյուրին չի եղել: Նրա հոգու կորովը, անսպառ էներգիան ու նվիրվածությունը, մանկավարժական էնտուզիազմն օգնել են հաղթահարելու բոլոր խոչընդոտները: Թերևս դա են վկայում Բերձորում ապրած ու աշխատած լավագույն 13 տարիները, որոնք մեծացրել են նրա անունն ու վաստակը: Նա ունի մեր՝ դասվարներիս հուզող բոլոր հարցերի պատասխանը: Նա է այն միջնապատը, որից մենք հաղորդակից ենք դառնում ժամանակակից մանկավարժության բոլոր նորություններին՝ մեթոդամանկավարժական ու դաստիարակչական:

Տիկի՛ն Թամազյան, Դուք անմնացորդ նվիրումով աջակցում ու սատարում եք մեզ՝ մեր հաջողությունը համարելով Ձերը: Ձերն են նաև մեր ձախողումները, որոնք մենք նորից սկսում ենք միասին հաղթահարել: Ձեր կյանքի ճանապարհին Դուք և՛ աշակերտներին, և՛ Ձեզ հետ աշխատող դասվարներին տվել եք սեր ու ջերմություն: Բազմաթիվ սերունդներ եք ճանապարհել մեծ կյանք՝ տալով նրանց Ձեր հոգու ջերմությունն ու մտքի թռիչքը, սիրառատ սիրտն ու նվիրումը:

Տարիների մանկավարժական հարուստ փորձով ծանրաբեռ, իր խոհերի հետ քայլող մանկավարժն այսօր 50 տարեկան է, իսկ նրա ծննդյան օրվա ամենաթանկ նվերն իր կրտսեր 19-ամյա որդու՝ Վահե Պետրոսյանի պետական պարգևն է՝ ԼՂՀ նախագահի շնորհած «Արիության մեդալը»: Ասել է թե՝ մայրական և մանկավարժական պատգամը գտել է իր հանգրվանը, և հայրենասեր մայրն ու մանկավարժը երջանիկ է բառիս ամենաընդգրկուն իմաստով:

Ջերմագին շնորհավորում ենք Ձեզ՝ ծննդյան 50-ամյակի կապակցությամբ, ցանկանում անսպառ եռանդ ու ստեղծագործական մեծ վերելքներ: Եղեք միշտ մեր կողքին՝ Ձեր մասնագիտական ու անձնային բարձր որակներով: Թող հավերժի լույսի արարման Ձեր ճանապարհը:

Քաշաթաղի շրջանի մի խումբ դասվարների անունից

ՄԵԹՈԴՓՈՒՆՋ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՒՄԱՐԵԼԻՆԵՐԸ

Կրթական բարեփոխումների անհրաժեշտությունը բխում է համաշխարհային և ազգային տնտեսությունների զարգացման աննախադեպ արագությունից, բարձր տեխնոլոգիաների ներդրումից: Կրթությունը դարձել է մի գործոն, որը պետք է նպաստի մարդու մեջ այնպիսի արժեքների դաստիարակմանը, որ նա կարողանա դառնալ որակյալ մասնագետ և արագ հարմարվի աշխատանքային շուկայի անընդհատ փոփոխվող պահանջներին: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր ուսումնական առարկայի նպատակը ոչ միայն գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացումն է, այլ նաև աշակերտի մոտ արժեքային համակարգի ձևավորումը:

Այսօր ուսուցչի մասնագիտությունն առանձնապես բարդ է: Դժվար է ուսուցիչ լինել առանց ավանդական հեղինակության ու հարգանքի, որոնք նրա մասնագիտության ուղեկիցներն են եղել անցյալում: Ուսուցիչ լինելն առանձնակի լարում է պահանջում երեխաների ազատական դաստիարակության ժամանակներում, երբ աշակերտները հակված են մերժել ամեն տեսակ հեղինակություն: Հանրակրթական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրմանը և այդ փորձի ներդրմանն ու աշխատանքների խթանմանը նպաստելուն են միտված առարկայական և փնջային մեթոդխորհուրդները:

Մանկավարժական առաջավոր փորձը նախահիմքն է մասսայական փորձի, որը ժամանակի ընթացքում վերածվում է հիմնարար մեթոդի: Մանկավարժական մեթոդները, նորությունները դժվար են կյանք մտնում, չի բացառվում նաև, որ որոշ կանխանշված մեթոդներ, չնայած մեծագույն ձգտումներին, կարող են չտալ ցանկալի արդյունք: Բայց առաջավոր մանկավարժական փորձը կարող է պարունակել այնպիսի եզակի ինքնատիպ բաղադրամասեր, որոնք կմտնեն մանկավարժության պատմության արժեքավոր ֆոնդը և կփոխանցվեն սերնդեսերունդ:

Մեթոդփնջերի աշխատանքը մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրմամբ չի սահմանափակվում: Այն նպատակաուղղված է նաև սկսնակ ու երիտասարդ ուսուցիչների մեթոդական նախապատրաստվածության բարձրացմանը, ինքնակրթության ապահովմանը, թեմատիկ ուսումնասիրությունների կազմակերպմանը, մեթոդամանկավարժական նորագույն նվաճումներին ծանոթանալուն, ուսումնական ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների քննարկմանը, համադպրոցական միջոցառումների, դպրոցական բազմաբնույթ հարցերի շուրջ լսումների, զեկուցումների կազմակերպմանը:

Վերոնշյալ աշխատանքների ապահովման ուղղությամբ արդյունավետ գործունեություն են կազմակերպել Ասկերանի շրջանի հանրակրթական հաստատություններում ձևավորված մեթոդփնջերը: Շրջանի 38 հանրակրթական հաստատությունները խմբավորված են ութ մեթոդփնջերում՝ հաշվի առնելով գյուղերի աշխարհագրական դիրքը, հեռավորությունը հենակետային դպրոցներից: Մեթոդփնջերի նախագահները (դպրոցների տնօրեններ) ուսումնական տարվա սկզբին կազմում են աշխատանքային պլան, աշխատակարգ և հետևողականորեն իրականացնում նախատեսված բոլոր միջոցառումները:

Ընթացիկ ուսումնական տարում մեթոդփնջերում լսվել և քննարկվել է 57 դասաժամ: Ասկերանի, Սարուշենի և Խնձրիստանի մեթոդփնջերում հրավիրվել է 4-ական, իսկ Պատարայի, Շոշի, Նորագյուղի, Այգեստանի, Ավետարանոցի մեթոդփնջերում՝ 2-ական նիստ:

Ուսումնական բոլոր առարկաներից կատարվել են դասալսումներ և մտքերի փոխանակում, մանկավարժական թեմաներով քննարկվել են զեկուցումներ: Ներկայացնենք քննարկված որոշ թեմաներ.

- Համակարգչային խաղերը ինտեգրված ուսուցման գործընթացում (Շոշի մեթոդփունջ)
- Անձի բարոյահոգեբանական դաստիարակության խնդիրները (Սարուշեն)
- Ուսուցչի մանկավարժական տակտը (Խնձրիստան)
- Բանակ-հասարակություն-դպրոց կապի ամրապնդման արդյունավետ ուղիները (Այգեստան)
- Ժամանակակից ուսուցման մեթոդները (Նորագյուղ)
- «Ուսուցման նոր մեթոդների կիրառումը տարրական դասարաններում» (Ավետարանոց)
- Կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեության կառուցվածքը և ուսուցչի դերը դպրոցականի կյանքում (Պատարա)

Ընդհանուր առմամբ լսվել և քննարկվել են 23 մանկավարժական և մեթոդական բնույթի թեմաներ: Մանկավարժների ուշադրությունը կենտրոնանում է դասավանդման մեթոդների ընտրությանը, դասերի վերլուծության ժամանակ նախապատվությունը տալիս են աշակերտների պատասխանների խորը և հիմնավոր լինելուն, գիտելիքների որակին, կարողություններին, հմտություններին, ուսուցչի շարադրանքին (գիտականություն, գաղափարականություն, արդիականություն), դասի դաստիարակչական նպատակաուղղվածությանը:

Փնջի աշխատանքներին մասնակից մանկավարժներին մեծապես հետաքրքրում են դասի մեթոդական կողմերը՝ հարցման եղանակների բազմազանություն, դիտողական պարագաների տեխնիկական միջոցների օգտագործում, դասավանդման պրոբլեմայնություն, սովորողների ինքնուրույնության և մտածողության զարգացում, աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելու և զբաղեցնելու, բանավեճի հրավիրելու ուսուցչի կարողություն, դասավանդվող նյութի ամրապնդման արդյունավետություն և նմանատիպ այլ հարցեր:

Քննարկումներն անցնում են գործնական մթնոլորտում, մտցվում են առաջարկություններ, առաջիկա հանդիպումների համար նախանշվում են ուղղություններ: Այսպես, Սարուշենի մեթոդփնջի նախագահ Ս. Գասպարյանը, կարևորելով դասղեկի աշխատանքի նրբությունները, առաջարկել է ամենամյա մրցույթների ցանկում նախատեսել նաև «Տարվա լավագույն դասղեկ» մրցույթը:

Մեթոդփնջերի աշխատանքի կարևոր, բաղկացուցիչ մաս են աշակերտների ուժերով ցուցադրվող միջոցառումները:

Աշակերտները հանդես են գալիս դասարաններով, խմբակի անդամներով, ներկաներին ցուցադրում իրենց կարողությունները: Այսպես, «Ոսկի աշուն»՝ կազմակերպվել է Շոշի, Նախիջևանիկի, Խնձրիստանի միջնակարգ դպրոցներում, «Գովք մեծ աշուղին»՝ Նորագյուղի միջնակարգ դպրոցում՝ Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին նվիրված, «Իմ հայրենի գյուղ Խնածախ»՝ Խնածախի միջնակարգ դպրոցի աշակերտների ուժերով, «Լեսնոյ-հերոսապատում»՝ Պատարայի միջնակարգ դպրոցի աշակերտների ուժերով, գրական-գեղարվեստական կոմպոզիցիա և կինոցուցադրում, «Հմուտ ձեռքեր» խմբակի աշխատանքների ցուցահանդես և հայրենասիրական երգերի մրցույթ՝ Ասկերանի միջնակարգ դպրոցում, «Փոքրիկ բեմի վրա»՝ Սարուշենի միջնակարգ դպրոցի աշակերտների ուժերով, «Գովք մայրենիին» պոեմից հատված՝ Ավետարանոցի միջնակարգ դպրոցում:

Մեթոդփնջերի նախագահները, պլանավորելով լսվելիք դասերը, հիմնականում հենվում են փորձառու ուսուցիչների մոտ դասալսումներ ու փորձի փոխանակում անցկացնելու սկզբունքին: Անհրաժեշտ է նշել, որ առանձին երիտասարդ մասնագետներ ցանկություն են հայտնում իրենց մոտ անցկացնելու դասալսումներ: Քննարկված 57 դասերից 4-ը անց են կացրել մինչև 8 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցչուհիներ է. Վերդյանը (Շոշ, ռուսաց լեզու), Ա. Ավանեսյանը (Ասկերան, քիմիա), Գ. Սարգսյանը (Ասկերան, -ինֆորմատիկա), Ն. Քամալյանը (Խնածախ, մաթեմատիկա) և արժանացել առարկայական մասնագետների դրական գնահատականին: Կյանքի դաս է Նորագյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն է. Վարդանյանի վարած դասը հասարակագիտությունից, երբ աշակերտները յուրացնում են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են բարին, պարտքը, իրավունքը, պատասխանատվությունը, անհրաժեշտությունը:

Հայրենասիրության դասեր է վարում Ավետարանոցի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նվարդ Բաղրյանը: Ուսուցչուհին իր մասնագիտական պատրաստվածությամբ, հմայիչ ու ոգեշնչված խոսքով, մանկավարժական տակտով, ուսուցանելու վարպետությամբ արժանանում է գործընկերների դրվատանքին ու համակրանքին: Ընթացիկ ուսումնական տարում Ն. Բաղրյանի մոտ կազմակերպվել է առաջավոր փորձի չորս դաս: Նա հաղթող է ճանաչվել նաև «Տարվա լավագույն ուսուցիչ և մանկավարժական փորձ» մրցույթի շրջանային փուլում: Մեր գործընկերուհուն մաղթենք հաջողություն հանրապետական փուլում:

Մասնագետների դրական գնահատականին են արժանացել Նախիջևանիկի և Ասկերանի միջնակարգ դպրոցների ֆիզիկայի ուսուցիչներ Հ. Միրզոյանը և է. Գաբրիելյանը: Ինքնատիպ դասեր է վարում Պատարայի միջնակարգ դպրոցի կերպարվեստի ուսուցչուհի Մ. Գրիգորյանը: Ուսանելի շատ պահեր ընկալեցին դասալսման մասնակիցները:

Պետք է նշել, որ քննարկումներ կատարելիս առարկայական մասնագետներն իրենց դիտողությունները, առաջարկությունները, կարծիքներն են հայտնում դասերի վերաբերյալ, նշում և՛ ընդօրինակելի, և՛ մասնագիտական թերացումների, և կատարելագործելու անհրաժեշտության պահերը: Քննարկումների, դասալսումների, հանդիպումների արդյունքում մեթոդական օգնության երաշխավորված և արդունավետ ձևաչափ է համարվում մեթոդփնջերի գործունեությունը:

Մեթոդփնջերի ղեկավարները, չշրջանցելով բազմավաստակ ուսուցիչների ներդրումը և փորձը, նիստերին օրինաչափ հրավիրում են թոշակառու ուսուցիչներին, լսում նրանց կարծիքը, առաջնորդվում նրանց խորհուրդներով: Այսպես՝ Ա. Ավանեսյանը (Դահրավ), Հ. Գաբրիելյանը, Ն. Հարությունյանը (Պատարա), Զ. Գրիգորյանը, է. Ասրյանը (Նորագյուղ) ցանկալի մասնակիցներ են մեթոդփնջերի աշխատանքներին: Ընթացիկ ուսումնական տարում վերոհիշյալ աշխատանքներին իրենց մասնակցությունն են ունեցել ԼՂՀ ԿԳ նախարարության ԿԳ վարչության պետ Ռ. Մուսայելյանը, հանրակրթական բաժնի վարիչ Ռ. Բազիյանը, մասնագետ Ա. Մարտիրոսյանը: Նրանց մասնակցությունը առանձին լիցք է հաղորդում դասերի վերլուծությանը, քննարկումներին: Ցուցաբերվող մասնագիտական, մեթոդական խորհուրդներն ավելի են պարտավորեցնում ուսուցիչներին:

Մեթոդփնջերի գործունեությունը նպաստում է նաև դպրոցների, մասնագետների միջև փոխադարձ հարգանքի, վստահության ամրապնդմանը, բարոյական շատ արժեքների պահպանմանը, դրանք սերունդներին փոխանցելուն: Հյուրընկալող դպրոցը, հաշվի առնելով վերոնշյալը, ձգտում է սեղանի շուրջ ավելի ամրապնդել այդ արժեքները:

Ժամանակին նման միտք է արտահայտել մեծ մանկավարժ, մարզժողկրթբաժվար Ս. Արամյանը. «Ես չեմ հրաժարվում այն հացի սեղանից, որտեղ մտահոգություն կա վաղվա օրվա՝ դպրոցի համար»:

Սվետլանա ԱՍՐՅԱՆ
Կրթության Ասկերանի շրջանային բաժնի գլխավոր մասնագետ

Շնորհավորանք

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

Ինչը վայելուչ է, արժանի է հարգանքի և ինչը արժանի է հարգանքի. միշտ էլ վայելուչ է...

Ցիցերոն

Ուսուցիչ՝ բարու, գեղեցիկի, վսեմի ու կատարելության սերմնացան, կրթության անխոնջ մշակ...

Յուրաքանչյուր ոք կարող է խոսել արդարության և ճշմարտության մասին, բայց հարգի է այն մարդը, ով այդ ամենով հանդերձ նաև ճշտակատար է: Լինել մանկավարժ, ուսուցանել ճշգրիտ թվեր, զբաղվել դաստիարակության վեհ գործով, արժանապատվության դասեր տալ, անմնացորդ նվիրել հայրենիքիդ ու ճշտակատար գործունեություն ծավալել 30 երկար ու ձիգ տարիներ՝ ներառած Արցախյան գոյամարտի հրաշունչ օրերը, կրթել հերոսներ և ռազմի դաշտ ուղարկել, իսկ ժամանակավոր խաղաղ դադարին համալրել Պաշտպանության բանակի շարքերը: Այս է Ստեփանակերտի Ա.Ս. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի տնօրեն Լյուդմիլա Հովհաննիսյանի կենսակերպը:

Ծնվել է 1958թ. հունիսի 8-ին: Ուսումնառություն ստացել է հ. 3 միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում, որն ավարտել է գերազանցությամբ 1979թ.:

Լ. Հովհաննիսյանն իր հոգու նրբին թելերով կապված է հարազատ կրթօջախին: Տարիների հոլովույթում նա պատվով է հաղթահարել տարբեր փորձություններ: Լինելով կրթության անխոնջ մշակ, իր լուսաշող նպատակները համարում է՝ խաղաղ երկինք մանուկներին, դպրոցների արգասաբեր աշխատանքը, աշակերտների հաջողությունները, ծնողների հպարտությունը:

Լ. Հովհաննիսյանը պատասխանատու պաշտոնում պահանջկոտ է նախ իր և հետո՝ բոլորի նկատմամբ:

Քնքուշ դեմքով, համեստ, զուսպ և ցածր ձայնով նրա փաղաքուշ խոսքին կարող է հետևել աշխատանքային կարգապահության համար խիստ ու պահանջկոտ ցասումը: Նրա համար կարգախոս է դարձել Պյութագորասի խոսքը՝ «Ինչ էլ որ մտածեն քո մասին, կատարիր այն, ինչը դու համարում ես արդարացի: Հավասարապես անտարբեր եղիր թե՛ պարսավանքի և թե՛ գովասանքի նկատմամբ»:

Լ. Հովհաննիսյանը ջանք ու եռանդ չի խնայում հարազատ դպրատունը փայլուն ու անթերի տեսնելու և վայելուչ պահելու համար: Նա անկաշառ սիրում է երեխաներին, իր մարդասիրությամբ վարակում իրեն շրջապատող մարդկանց:

Դպրոցը և դպրոցավարությունը Լ. Հովհաննիսյանի կյանքի իմաստն են: Նրա ուրախությունը, անձնականից զատ, սովորողների հաղթանակներն են: Նա կարողանում է կիսել աշակերտների և գործընկերների ուրախությունը, իսկ տխրության պահին՝ օգնության ձեռք մեկնում:

Ծնվել է միայն բարություն շնորհելու համար: Սիրում է ծաղիկներ, փաղաքշել նրանց քնքշություն սիրող թևերը և մանկան ուրախությամբ հրճվել յուրաքանչյուր տերևի ծլարձակմամբ:

Լ. Հովհաննիսյանը վայելում է մանկավարժական, ծնողական և աշակերտական կոլեկտիվների սերն ու հարգանքը, որոնք էլ գորովանքով շնորհավորում են հոբելյարի ծնունդը, մաղթում արևաշող ներկա, առողջություն, երջանկություն: Թող յուրաքանչյուր այգ նրա համար լուսառատ ու լուսաշող լինի:

Լ. Հովհաննիսյանը Արցախյան գոյամարտին անմնացորդ նվիրված ամուսնու սիրելի կին է, երկու աննման աղջիկների գորովագույթ մայր և 4 թոռնիկների սիրասուն տատիկ:

Սիրելի՛ Լյուդմիլա Անդրեևնա, թո՛ղ Ձեր բարի սիրտը միշտ խինդ ու ծիծաղով լցվի, բեղմնավոր աշխատանքը միշտ արժանի արդյունք տա՝ ի շահ Արցախ աշխարհի և կրթական համակարգի:

Ա.Ս. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՄԵՐՈՆՔ

ՀՅՈՒՍԻՍԻ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿՑԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ակնարկը ՌԱՖՍՀ վաստակավոր երկրաբան, երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու, մեր հայրենակից Սերգեյ Մելքումյանի մասին է:

Մշտապես կատարելագործվող բնության բարձրագույն արդյունքը գեղեցիկ մարդն է:

Գյոթե

Սևաչ տղա էր Սերգեյը: Նիհար, թխադեմ: Մուգ սև, խիտ մազեր ուներ, աջ այտին՝ մի փոքրիկ խալ: Անչափ սիրում էր բնությունը:

Ավարտելով Ստեփանակերտի հ. 1 միջնակարգ դպրոցը՝ որոշեց ուսումը շարունակել Երևանում: Ընդունվեց պետհամալսարանի երկրաբանական ֆակուլտետը:

4-րդ կուրսն ավարտելուց համակուրսեցի հինգ տղաների հետ ուղեգրում են Սիբիր՝ Յակուտիայի Ինքնավար Հանրապետությունում անցկացնելու արտադրական պրակտիկան: Յակուտիայում նրանց բաժանում են իրարից, ուղարկում տարբեր շրջաններ: Սերգեյին վիճակվում է Ալդանի շրջանը: Տղաները վերջացնում են պրակտիկան և խմբովին վերադառնում Երևան՝ շարունակելու ուսումը և ավարտելու:

Սերգեյն ավարտում է համալսարանը և, երկրաբանի մասնագիտություն ստացած, գալիս Ստեփանակերտ: Բայց իր մասնագիտությամբ աշխատանք չկար: Որոշ ժամանակ աշխատեց քաղաքում քիչ թե շատ կառուցվող շենքերի վրա՝ աշխղեկ, ինժեներ...

Աշխատանքից տուն էր գալիս մտազբաղ ու մտամոլոր: Բնավորությամբ աշխույժ, ժպտուն երիտասարդն այդ օրերին դարձել էր թախծոտ: Նա մտածում է, որ նման աշխատանքներն իր համար չեն, իր զբաղմունքի առարկան հենց իր ոտքի տակ է, երկրի ընդերքում: Ու պատրաստվեց ճանապարհի: Իր հետ վերցրեց Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Մ. Մեծարենցի բանաստեղծությունների ժողովածուները: Մայրն էլ մի դույլ ջուր ցանեց հետևից, բարի ճանապարհ մաղթեց ու տուն մտավ արտասուքն աչքերին:

Տեղ հասնելուն պես նամակ գրեց, որ չմտածեն իր մասին. Սիբիրն էլ մարդու համար է. «Գայլն այնքան սարսափելի չէ, որքան՝ նրա անունը»:

Վրա հասավ սիբիրյան ձմեռը՝ ցուրտ, սառնամանիք, անգամ ծառերը չեն դիմանում, սառցե լուլաներն ընկնելով գետնին, վայրկենապես փշրվում են: Ասում են՝ սիբիրյան սառնամանիքին նույնիսկ երկաթը կորցնում է իր կարծրությունը և դառնում փխրուն: Ցրտից դողալով, հեռագրասյուներից ձգվող լարերը կամա թե ակամա «երգում են», տեղում է առատ ձյուն՝ ամեն ինչ առնելով իր տակ: Այս պահը նրան հիշեցրեց հայ բանաստեղծի տողերը.

«Թափվիր, ճերմակ, թափվիր, ձյուն,
Թափվիր իմ սրտում,
Ծածկիր անտառ ու կածան...:

(Երկրաբանի աշխատանքը հիմնականում դրսում է՝ դաշտերում, լեռներում. հավաքել նմուշներ և բերել: Սիբիրի եղանակային պայմանները հաճախ թույլ չեն տալիս դա անել, ի՞նչ էիք անում այդ օրերին,- տարիներ անց նրան հարցրի:

- Երկրաբանի աշխատանքն, իհարկե, հավաքել-բերելը չէ միայն. նմուշները պետք է զննվեն լաբորատորիայում, արվեն համապատասխան եզրակացություններ, կատարվեն գրառումներ և այլն: Իսկ ցանկության դեպքում միշտ էլ զբաղմունք կգտնվի: Անց էինք կացնում զանազան սպորտային միջոցառումներ՝ մրցություններ, խաղեր... Անձամբ ես ժամանակս հագեցնում էի ընթերցանությամբ, հմտանում էի անգլերեն լեզվի մեջ. մտադիր էի ընդունվել Մոսկվայի երկրաբանության ինստիտուտի ասպիրանտուրան, որտեղ քննություններից մեկն անգլերեն էր:

- Ալդանում աշխատած ութ տարիների ընթացքում որոշակի արդյունքի հասե՞լ եք:

- Գտել ենք փայլարի պաշար, քարտեզահանել տեղանքը, կատարել հանքավայրի պաշարի հաշվարկ):

Շատ չանցած՝ նրա կյանքի ճանապարհն այլ ուղղությամբ ձգվեց: Նախարարությունը նրան առաջարկում է նոր աշխատավայր՝ երկրաբանական հետազոտական կոմպլեքս արշավախմբի պետ Արխանգելսկի մարզում: Տալիս են լայն իրավունքներ աշխատանքում, միայն թե կազմավորի արշավախումբ և սկսի աշխատել: Խոստանում են մեծ օգնություն, որ մենակ չեն թողնի:

Երկար-բարակ մտածելու ժամանակ չկար, վերցնում է հրամանը և շտապում հասնել Մոսկվա-Արխանգելսկ գնացքին:

Գնացքում գիշերն աչքերին քուն չի իջնում: Մեծ Ռուսաստանում ի՞նքը պիտի հայտնվեր այդ ջրապտույտում: Ո՞վ է եղել պատճառը կամ երաշխավորողը... Այս մտքերից ազատվելու համար հիշում է՝ չենք թողնի մենակ, կլինի մեծ օգնություն: Իսկ գնացքը՝ ողջ գիշեր՝ թիկ-տակ, թիկ-տակ...

Հասավ ռուս մեծ գիտնականի՝ Լոմոնոսովի քաղաքը՝ Արխանգելսկ, Հյուսիսային ծովի ափով մեկ ձգված:

Ներկայացավ տեղի ղեկավարությանը: Պարզվեց, որ հիմնարկը պիտի տեղադրվի մարզի Պլեսեցկի շրջանի Բուլատովա ավանում: Մինչև աշխատավայր գնալը հնարավորություն տվին մոտ մեկ շաբաթ ծանոթանալ քաղաքի և նրա շրջակայքի տեսարժան վայրերին: Եղավ նաև Պետրոս Մեծի և Լոմոնոսովի հուշարձանների մոտ: Կանգնել էր մեծ գիտնականի հուշարձանի դիմաց, հայացքը հառել նրան և կարծես մտքում խոսում էր նրա հետ, երևի ինչ-որ բան էր խոստանում: Այո՛, խոստանում էր, որ երևաց քառասուն տարի հետո:

Վերջապես Պլեսեցկում է... Անշուք տեսք ուներ այն, հիմնականում փայտյա տնակներ էին այս ու այն կողմ ցրված: Երեք օր հյուրընկալվելուց հետո ուղեկցեցին Բուլատովա: Այստեղ էլ շրջապատը ճնշող էր, միակ հրապուրիչը սլացիկ եղևնիներն էին: Ավանը բաղկացած էր 10-15 ֆիննական տնակներից և շարքով իրար կպած բարաքներից: Ֆիննական տնակներից մեկն իր համար բնակարան ընտրեց:

Ավանի բնակիչները ճակատագրով խեղվածներ էին՝ ստալինյան պաշտամունքի զոհ դարձած աքսորյալներ. իրենց կրած «մեղքերից» ազատվելուց հետո շատերը հայրենիք չեն վերադարձել՝ այլևս իրենց համարելով հայրենիքի համար ավելորդ մարդիկ: Ինչպես Եսենինն էր ասում՝ «Իմ երկրում ես կարծես օտարերկրացի եմ»: Աքսորավայրում, ճամբարային պայմաններում նրանց հիմնական աշխատանքը եղել է անտառահատումը, գերանները ուսերի վրա տեղափոխելը: Քաղաքական պիտակով աքսորյալների ճամբարներ էին՝ խիստ հսկողության տակ: Գրքին ու գրչին փոխարինել էին սղոցն ու կացինը, լծակն ու քլունգը...

Այս մարդկանցով պետք է կազմավորվեր կոմպլեքս արշավախումբը և սկսեր աշխատել:

Ի՞նչ անել, ինչի՞ց սկսել, շատ խորհեց Սերգեյը: Գրեց Յակուտսկ գործընկերներին՝ հրավիրելով իր մոտ աշխատելու, հայտարարություններ տվեց հանրապետությունների թերթերում: Պիտի պատրաստ լինեին եկողներին ընդունելու և տեղավորելու, որը ևս դժվարին խնդիր էր... Պարզ է, պետք էր ընդգրկել հիմնականում տեղի բնակչությանը:

Ժամանակի ընթացքում աշխատանքները մտան հունի մեջ: Նախարարությունն էլ լավ կատարեց խոստումը. ուղարկեց տարբեր տեսակի մեքենաներ՝ բարձիչ, ինքնաթափ, հողաքաշ, հորատող, նույնիսկ ուղղաթիռ:

Տայգա է, ճահճուտներ, անանցանելի ու անվերջանալի անտառներ, ճանապարհների խիստ բացակայություն: Արշավախմբի հետազոտման տարածքը կազմում էր 150 հազար քառ. կմ, պատկերավոր ասած, ներկա Հայաստանի հինգ չափ տարածություն: Սարքերի և այլ միջոցների տեղափոխումը, կապն աշխատող խմբերի հետ արվում էր ուղղաթիռի միջոցով:

Արշավախումբը սկսել էր աշխատել լիարյուն՝ իր մեջ ընդգրկելով քսանից ավելի երկրաբանական խմբեր՝ շուրջ 750 աշխատողներով: Հայտնաբերվեցին բոքսիտների (ալյումին) հարուստ պաշարներ, որոնք կարճ ժամանակ անց մտան արտադրություն: Իսկ հայտնի է, թե ալյումինն ինչ հսկայական նշանակություն ունի երկրի պաշտպանունակության, ինքնաթիռաշինության, կենցաղային ապրանքների արտադրության, սննդարդյունաբերության և այլնի համար: Այդ հանքավայրերի վրա կառուցված գործարանում (երկրորդն էր Ռուսաստանի Ֆեդերացիայի եվրոպական մասում, առաջինը՝ Պետրոզավոդսկը) մեծ թվով մարդիկ ունեցան աշխատանք:

(- Երիտասարդ էիք, երբ ընդունեցիք այդ պատասխանատու, բայց և կարևոր տեղամասը,- դիմում եմ նրան,- երբևէ եղե՞լ են անցանկալի դեպքեր:

- Նման աշխատանքներում չեն բացառվում անգամ մարդկային զոհերը: Պատմությունից հայտնի է, որ հյուսիսային այդ շրջաններում փոքրիկ արշավախմբեր են անհետացել: Գլխավորը՝ որ մեր արշավախումբն իր երկարամյա գործունեության ընթացքում մարդկային զոհ չի տվել: Այլ դեպքեր եղել են: Այսպես, մի քանի օրով գնացել էի Մոսկվա՝ նախարարություն: Այնտեղ էլ ստացա հեռագիր, որ հիմնարկը վառվել է: Վերադարձա: Տեղում միայն մոխիրն էր: Կաթսայատան աշխատողը գիշերը քնել էր, ծագել էր հրդեհ, բռնկվել ևս երկու տնակ, ոչինչ չէին կարողացել փրկել:

- Ի՞նչ եղավ այդ աշխատողի ճակատագիրը:

- Դատարան տալ և նստեցնե՞լ: Ի՞նչ օգուտ: Ընտանիքը նրա խնամքին էր: Օձիքդ թափ տաս և ազատվես աշխատողից՝ նշանակում է քեզ սպառել ես աշխատանքում, այլևս անելիք չունես... Չին մեծ ժողովրդի մեջ տարածված էթիկայի կանոններից մեկն այսպիսին է. «Երբեք չանես քո ենթակայի նկատմամբ այն, ինչը չես կամենա, որ վերադասդ անի քո նկատմամբ»: Գեղեցիկ է ասված:

Սավինսկ կոչվող տեղամասում սկսել էին կառուցել ավան երկրաբանների համար: Սերգեյը հաճախակի պիտի լիներ նաև այդ տեղամասում, որ հանձնեն ժամանակին և որակով: Ժամանակին հանձնեցին 5-հարկանի բնակելի շենքեր՝ լավ հարմարություններով: Մարդիկ ազատվում էին բարաքներից և ստանում ընդարձակ, լուսավոր բնակարան: Անընդհատ բնակարանամուտ էր: Շահագործման հանձնվեցին 1200-տեղանոց տիպային դպրոց, մշակույթի տուն և այլ օջախներ:

- Ինչո՞ւ թողիք արշավախումբը,- հարցնում եմ նրան:

- Տարիքն իր կնիքն էր դրել: Այն ղեկավարել եմ շուրջ երեսուն տարի անընդմեջ և կատարել նրա առջև դրված ծրագրային պահանջները: Իհարկե, դժվար էր բաժանվել: Կազմակերպեցին հրաժեշտի սրտառուչ երեկո, որից հետո տեղափոխվեցի Արխանգելսկ՝ նոր աշխատանքի:

- Իսկ ինչպե՞ս էր կոչվում Ձեր նոր աշխատանքը:

- Եթե թարգմանելու լինենք, այսպես՝ բնական պաշարների նախարարության երկրաբանական տեղեկատվության հյուսիսային տարածքային հիմնապաշարի (ֆոնդ) տնօրենի տեղակալ: Աշխարհագրական առումով ավելի ընդարձակ է, քան արշավախումբը, բայց դես ու դեն գնալ չկա, նստակյաց է, աշխատանքները տարվում էին տեղեկատվությամբ՝ կամչատկայից մինչև Մուրմանսկ, Ռուսաստանի Ֆեդերացիայի հյուսիսային տարածքով մեկ:

- Վերջերս եղա Գանձասարում, այնտեղ տեսա մի ծավալուն գիրք Ձեր հեղինակությամբ: Ինչպե՞ս լույս աշխարհ եկավ այն:

- Աշխատանքի հետ կապված՝ եղել եմ շատ երկրներում՝ Գերմանիա, Սկանդինավյան երկրներ, Չինաստան, Կանադա և այլն: Ծագում էին այսպիսի հարցեր՝ ինչո՞ւ շատ երկրներ ստեղծել են նյութատեխնիկական առատ բազա ու ապրում են սրընթաց զարգացում, հարուստ ու լիառատ կյանքով, իսկ դրանց կողքին կան երկրներ, որոնք գտնվում են աղքատ ու անհույս վիճակում: Փորձեցի գտնել պատճառը՝ ինքս ինձ տալով այսպիսի հարցեր. պատճառը երկրի մեծ կամ փոքր լինե՞լն է, բնական պաշարներով հարուստ կամ աղքատ լինե՞լը, աշխարհագրական դիրքը կամ բնակլիմայական պայմանն՞ը, ազգային պատկանելությո՞ւնը, իսկ գուցե կրո՞նը, որին դավանում է տվյալ երկրի ժողովուրդը: Ուսումնասիրության տակ առա աշխարհի 192 երկրներ զանազան կողմերից, իսկ գրքի մեջ մտցրի 174 երկրների վիճակագրություն՝ գիտակցաբար բաց թողնելով 200 հազարից քիչ բնակչություն ունեցող 18 երկրներ... Իսկ թե ինչպիսին է գիրքը, ոչ թե հեղինակը, այլ ընթերցողը պիտի գնահատի):

Գրքին ծանոթացել և արձագանքել են Ռուսաստանի Ֆեդերացիայի հեղինակավոր գիտական կոլեկտիվներ և անհատ մասնագետ գիտնականներ: Բերենք այդ կոլեկտիվներից մեկի՝ Ռուսատանի Ֆեդերացիայի բարձրագույն դպրոցի տնտեսագիտական, երկրաբանական, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ Ա.Վ. Սմետանինի, Վ.Ա. Սկրիպչենկոյի, Ս.Վ. Միխայլովի համատեղ արձագանքից մի պատառիկ:

"...книга "Религия и производство" предстовляет собой оригинальное научное историко-экономическое исследование, достойна высокого общественного признания, а ее автор Сергей Айрапетович Мелкумян-известный в Архангельской области производственник, ученый, внесший заметный вклад в освоение северных недр, может бытьвыдвинут на соискание премии М.В. Ломоносова":

Ահա 40 տարի առաջ ինչ էր նա խոստանում՝ կանգնած ռուս մեծ գիտնական Մ.Վ. Լոմոնոսովի հուշարձանի դիմաց: Անցած տարվա նոյեմբերին մի քանի օրով եկավ Ստեփանակերտ, եղավ Շուշիում ու Գանձասարում, Արցախի հոգևոր օջախին նվիրեց գրքից մի օրինակ: Գանձասար այցելողները կարող են ծանոթանալ գրքին:

Գիտական մենագրությունն ունի 2-րդ մաս, գրեթե նույն ծավալի, բայց դեռ նրա վրա աշխատանք կա կատարելու: Վերին զորավորը տա առողջություն, որպեսզի դրվի ընթերցողի սեղանին: Նրա վերաբերյալ նյութս հասցնելով հանգրվանին, հարցնում եմ.

- Իսկ ո՞ւր են այն մուգ սև ու խիտ մազերդ:

- Թողել եմ տայգայում՝ վրաս առել եղևնիներին նստած ձյունը.

Թափվիր դանդաղ ու թեթև,
Այսպես թափվում էիր դու,
Երբ ես ջահել էի դեռ,
Հույզերով հորդուն:
Թափվի՛ր, փռվի՛ր իմ սրտում,
Ճերմակ երազ, ճերմակ ձյուն...

Գուրգեն Մահարի

Նրա գիտակցական ողջ կյանքն անցել է Սիբիրում ու Ծայր Հյուսիսում, ու երբեք տաքուկ անկյուն չի փնտրել: Նույնիսկ չէր շտապում թողնել ֆիննական տնակը և տեղափոխվել Սավինսկի հարմարավետ բնակարանը: Այստեղ իրեն ավելի հարազատ էր: Ուներ հարուստ գրադարան, որն առաջին ծիծեռնակն էր աքսորաբնակ այդ շրջանում, և ծառայեցնում էր ավանի բնակչությանը: Կարծես նրան ուղարկել էին աշխատելու ոչ միայն արշավախմբերի ղեկավար, այլև լուսավորիչ... Օրինակելով նրան՝ շուտով շատերն ունեցան իրենց անձնական գրադարանը:

- Չհաշված ինքնակրթությունն ու ինքնազարգացումը,- հարցնում եմ նրան,- գիտելիքների այդչափ հարուստ ու հիմնավոր պաշարն ստացել եք բուհում: Երբևիցե երախտագիտական զգացում ունեցե՞լ եք բուհի նկատմամբ:

- Արձակուրդիս եղա Երևանի պետական համալսարանի մեր ամբիոնում, առաջարկեցի, որ կարող եմ ընդունել մինչև հինգ ուսանող՝ մեզ մոտ անցկացնելու իրենց գործնական աշխատանքը, բոլոր ծախսերը վերցնելով մեր արշավախմբի վրա, որ օգտակար է նաև ուսանողների համար՝ աշխատել Հայաստանից դուրս և աշխարհ տեսնել: Ընդունեցին սիրով, և դա դարձավ ավանդույթ տարիներ շարունակ: Մեծ հեռավորությունը՝ Արխանգելսկ-Երևան (4000 կմ) դա է ընձեռել...

Նունե ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
Հադրութի շրջ., գ. Առաջամուղ
Արվեստագետ

ԱՐՎԵՍՏ

ՆՎԻՐՎԱԾ ԱՆՄԱՀ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

«Վախեցիր ճակատագրից, եթե այն առատորեն փաղաքշանք է պարգևում». այսպիսի խոսքերով է առաջնորդվել ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Պետական և Լենինյան մրցանակների դափնեկիր, Սոցիալիստական աշխատանքի հերոս, հասարակական գործիչ, արվեստագիտության դոկտոր, 20-րդ դարի խոշորագույն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը: Ժանրերի բազմազանությունը, ռիթմի և ոճի արտասովորությունը՝ ներդաշնակված ինտոնացիոն առանձնահատկություններով, նրա անհատականության վկայությունն են: Կոմպոզիտորն իր ստեղծագործության ժողովրդական ակունքներով տարված էր մանուկ հասակից, սակայն երաժշտությամբ լրջորեն զբաղվելու հնարավորություն ունեցել է բավականին ուշ՝ 19 տարեկանում:

Հունիսի 6-ին լրացավ հանրահայտ կոմպոզիտորի ծննդյան 110-ամյակը: Հունիսի 5-ին Մարտունու Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցում կազմակերպվեց հոբելյանական ցերեկույթ, որը վարեց դպրոցի դաշնամուրի դասատու Լուսինե Խաչատրյանը: Ներկա էին Մարտունու շրջանի արհմիությունների նախագահ Է. Սերգեյանը, քաղաքապետ Մ. Խաչատրյանը:

Ներկայացվեցին մեծ կոմպոզիտորի կենսագրությունն ու ստեղծագործական կյանքի տարբեր ժամանակաշրջանները, որոնք դպրոցի սաների դաշնամուրային փայլուն կատարումներով հրամցվեցին հանդիսատեսին:

«Հենց սկզբից Ա. Խաչատրյանի ստեղծագործություններում նկատելի էին ինքնուրույն երաժշտական մտածողության սաղմերը, և զգացվում էր երիտասարդ ու ժամանակակից կյանքի զարկերակը»,- նման խոսքերով է բնութագրել Գնեսինը երիտասարդ երաժիշտի ստեղծագործական ուսման ընդամենը երկրորդ տարվա ընթացքում գրած «Պար ջութակի և դաշնամուրի համար» գործը և դաշնամուրային պիեսները:

Անվանի կոմպոզիտոր, հիանալի մանկավարժ Մյասկովսկու ղեկավարությամբ Ա. Խաչատրյանը գրում է իր «Ջութակի և դաշնամուրի սոնատը», «Դաշնամուրի, ջութակի և կլարնետի տրիոն», «Պարային սյուիտը», «Տոկատը» և այլ գործեր: Ուսման տարիներին գրված ստեղծագործությունները հրատարակվում են, կատարվում՝ ազդարարելով կոմպոզիտորի մուտքը երաժշտության աշխարհ: Նրա սիմֆոնիաները, կոնցերտներն ու կոնցերտռապսոդիաները, բալետները, մյուս սիմֆոնիկ գործերը, ստեղծագործությունները մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար, կամերային և վոկալ ստեղծագործությունները, դրամատիկական ներկայացումների և 17 կինոֆիլմերի համար գրված երաժշտությունն առայսօր գրավում են մեծ լսարաններ գրեթե բոլոր մայրցամաքներում: Հայտնի ջութակահար Դավիթ Օյստրախին նվիրված «Ջութակի կոնցերտ»-ի համար Ա. Խաչատրյանը ստացավ առաջին պետական մրցանակը, իսկ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ծնված՝ Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի երաժշտությունն առայսօր հնչում է աշխարհի տարբեր բեմերից:

Որպես կոմպոզիտոր և դիրիժոր՝ Ա. Խաչատրյանը հեղինակային համերգներով հանդես է եկել ավելի քան 50 երկրներում: Ամենուր նրա արվեստն ընդունվեց բացառիկ ջերմությամբ: Հայ երաժիշտի ստեղծագործությունները փառաբանվեցին աշխարհի բազմաթիվ երկրներում: Ստեղծագործական, մանկավարժական, կատարողական գործունեությանը զուգընթաց՝ Ա. Խաչատրյանն առանձնահատուկ եռանդով նվիրվում է նաև երաժշտահասարակական գործունեությանը: Նա ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի անդամ էր, Իտալիայի «Սանտա Չեչիլիա» երաժշտական ակադեմիայի պատվավոր անդամ, Մեքսիկայի կոնսերվատորիայի պատվավոր պրոֆեսոր, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ:

1978թ. մայիսի 1-ին 75-ամյա հոբելյանի շեմին իր մահկանացուն է կնքում աշխարհահռչակ արվեստագետ, Մեծ Մարդ և տաղանդավոր երաժիշտ Արամ Խաչատրյանը:

Նա մեր փոքրության առասպելի մեծ հերքումը, մեծերի հետ չափվելու խորհուրդը եղավ փոքրաթիվ մեր ժողովրդի՝ դառնալով քաղաքակրթության մեր վկայականը:

Հայ ժողովրդի մեծագույն զավակ Արամ Խաչատրյանի հիշատակը մշտապես վառ կմնա արվեստասեր հասարակության շրջանում, իսկ նրա ստեղծագործությունները դարեր շարունակ կհնչեն աշխարհի տարբեր բեմերում:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ ՀՄՏԱՆԱԼ ԱՐՀԵՍՏԻ ՄԵՋ

Ազնիվ աշխատանքն ու կամքը համառ հրաշքներ են ծնում, իրավ, մեզ համար:
Ա. Նեկրասով

Դպրոցն այն կրթօջախն է, որտեղ ոչ միայն գիտելիք է ստանում, այլև ձևավորվում է ապագա քաղաքացին: Այն սաների մեջ պատվաստում է ճաշակ, շնորհք, գեղեցիկն ընկալելու կարողություն ու նաև այդ գեղեցիկը ստեղծելու հմտություն:

Այդ հարցում բարձր է դպրոցի տեխնոլոգիայի ուսուցիչներ Սաթենիկ Ծատրյանի և Գայանե Քոչարյանի դերը: Նրանք, իրենց համար նշանաբան դարձնելով մեծ վարպետի խոսքերը՝ «Արհեստ սովորի՛ր, մի՛ լինիր նազուկ, արհեստն է մարդուն ոսկե բիլազուկ», աշակերտներին են փոխանցում իրենց կարողություններն ու հմտությունները: Դրա վառ ապացույցը դպրոցում բացված ցուցահանդեսն է, որտեղ ցուցադրվել են սաների հմուտ ձեռքերով ստեղծված հիասքանչ գործերը, որ ավանդված են մեր նախնիներից և անցնելով այսօրվա սանին, կանչում են. «Տեսե՞ք, մեզ կերտել են դպրոցի սաներն իրենց հմուտ ձեռքերով»:

Պատից նայում են աշակերտների պատրաստած աղցանների, տորթերի, սպասքադրած սեղանների նկարները, սեղաններին շարված են աղջիկների ասեղնագործության և շյուղագործության լավագույն նմուշներ՝ «Անձեռոցիկ», «Ձմռան տեսարան», «Խաչքար», հուլունքագործության լավագույն գործեր՝ բիլազուկ, վզնոցներ, ականջօղեր:

Իսկ գունավոր ամսագրերի թղթերը հմտորեն վեր են ածվել երփներանգ ծաղիկների:

Դպրոցի աշակերտները, շնորհիվ Սաթենիկ Ծատրյանի, յուրացրել են ասեղնագործության նոր տեսակ՝ ասեղնագործություն ստվարաթղթի վրա (изонить) և ներկայացրել իրենց լավագույն աշխատանքները՝ «Արևածաղիկ», «Հազարան բլբուլ», «Կատու», «Ճուտ», «Տոնածառ»:

Ցուցահանդեսի դիտորդները զարմանքի ու հիացմունքի զգացումով են դիտում տեխնոլոգիայի մյուս ուսուցչուհու՝ Գայանե Քոչարյանի սովորեցրած գործերը: Նա տղաներին սովորեցրել է կերտել շատ հետաքրքիր գործեր: Նայելով դրանց, թվում է՝ դպրոց են եկել և բազմել սեղաններին անտառի բնակիչները՝ «Հրեղեն ձի», «Օձ», «Փիղ», «Արջն անտառում», «Առյուծ», «Բու», «Կապիկ», «Կարիճ», դաշտից եկել են «Թիթեռը», «Բզեզը», «Ձատիկը»: Իսկ ճերմակաթույր «Կարապը» հպարտ նայում է ու հուշում. «Տեսե՛ք, մեզ ստեղծել են հ. 8 ավագ դպրոցի սաները»:

Դինոզավրի կմախքները հայտնում են, որ աշխարհում եղել են նաև նման կենդանիներ: Ձրի բնակիչներ էլ կային՝ «Ձուկ», «Դելֆին»:

Իսկ Հիսուսի դիմանկարն ու բազում քանդակած խաչերը հայտնում են, որ այդ ամենը ստեղծել են քրիստոնյա աշակերտները:

Ներկայացված են «Ուղղաթիռ», «Ռմբակոծիչ» անուններով աշխատանքներ: Անչափ հետաքրքիր է «Թոնրատունը». այն մտովի տեղափոխում է դիտորդին հայկական հին գյուղը, կարծես զգացնել է տալիս թոնրի թեժությունն ու նոր թխած հացի բույրը:

Շնորհիվ իրենց վարպետ ուսուցիչների, սաները զգում են արհեստի կարևորությունը, նրանք լավ գիտեն, որ գործը վարպետից է վախենում, որ համառ կամքն ու աշխատասիրությունը միայն կարող են ծնել այն հրաշքները, որ ստեղծել են:

Իսկ ուսուցիչները լավ են յուրացրել հին դարի մեծ մտածող Սենեկայի խոսքը. «Սովորեցնելով ուրիշներին՝ սովորում ենք մենք ինքներս» և շարունակում ենք սովորեցնել, հմտացնել մեր սաներին արհեստի մեջ:

Իրինա ՕՍԻՊՈՎԱ
Ստեփ. Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոց

ԱՅԴ ՎԵՀ, ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՂ ԿՈՉՈՒՄԸ՝ ՈՒՍՈՒՑԻՉ

Սիրիր աշխատանքդ, և դու երբեք ստիպված չես լինի աշխատել:
Կոմֆուցիուս

Այս խոսքերը պետք են և տեղին, երբ պետք է բնորոշել Անահիտ Հարությունյանին: Նա զուգակցում է մարդկային բարձր արժանիքները մանկավարժական վարպետության հետ, զգում յուրաքանչյուր աշակերտի հոգին, դառնում նրա հոգու նրբին լարերի թարգմանը: Նրա համար յուրաքանչյուր աշակերտ մի անհատ է, մի աշխարհ, որտեղ պետք է սերմանել բարին ու գեղեցիկը՝ ճնշելով վատի, տգեղի, չարի ու անտարբերության որոմը:

Եվ հենց ինքն իր օրինակելի պահվածքով ու կեցվածքով ջերմություն ու լույս է տարածում կոլեկտիվում: Տասնամյակների փորձը սիրով փոխանցում է երիտասարդ գործընկերներին: Սիրում է լինել ինքնատիպ, սիրած գործին մոտենում է ստեղծագործաբար՝ անընդհատ նորոգելով իր աշխատանքային զինանոցը:

Անակնկալ էր այս տարի այն, որ նա համալրեց իր աշխատանքը ևս մեկ օրինակելի նախաձեռնությամբ. 7-րդ դասարանը, որի դասղեկն է նա, սկսեց լույս ընծայել դասարանական ամսաթերթ՝ «Շավիղ» անվանումով: Նրա խոսքով, թերթ հրատարակելու հիմնական նպատակը երեխաների մեջ սեփական կարծիք արտահայտելու կարողություն զարգացնելն է, ինքնուրույնություն, ուշադրություն դաստիարակելը, ինչպես նաև ինքնարտահայտվելու հնարավորություն տալը:

Երեխաները թերթում նաև «պաշտոններ» ունեն, նրանցից երկուսը սրբագրիչ են և անպայման կարդում, ստուգում են մյուս աշակերտների նյութերը: Վերջիններս էլ թերթի լրագրողներն են: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր խորագիրը՝ «Շնորհավորանք», «Խոհանոց», «Հանելուկներ», «Սպորտ» և այլն: Իսկ խմբագիրը Ա. Հարությունյանն է: Թերթը հնարավորություն է տալիս այլ դասարանների երեխաներին նույնպես տպագրել իրենց նյութերը: Տարբեր դասարանների աշակերտներ թերթին են տրամադրում սեփական ստեղծագործությունները: Իրավ է ասում մեծ մանկավարժ Կոմենսկին. «Աշակերտը ոչ թե անոթ է, որ պետք է լցնել, այլ ջահ, որ պետք է վառել հետաքրքրասիրության կայծով»

Հուսանք, որ «Շավիղը» նոր շավիղներ կբացի...

Սվետլանա ՉԱԼԱԲՅԱՆ
Քարվաճառի միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՄՈՒՐԱՑԱՆՅԱՆ ՕՐԵՐ

ՄԵՋ ՀԵՏ ՔԱՅԼՈՂ ԴԱՍԱԿԱՆԸ

Հայոց Արևելից աշխարհի Արցախի լուսաբացները վաղուց արդեն խաղաղ ու ստեղծագործ կյանք են ավետում, և այստեղ արցախցին, իր պապերի ու ապուպապերի ավանդույթներին հավատարիմ, ամեն մի օրն ապրում է հայավարի. սահմանամերձ տարածքում հողագործը հաց է արարում հերոսաբար, գրչի մշակը տող է ստեղծում, զինվորը երկրի անդորրն է հսկում: Սա հայի ոգեղեն հզոր ուժի արգասիքն է, նրա հավիտենականության առաջին նախապայմանը:

Արցախում գրական-մշակութային կյանքի աշխուժացման գործընթացին մեծապես նպաստում են ԼՂՀ գրողների միության նախաձեռնությամբ ամեն տարի մայիսին անցկացվող Մուրացանյան օրերը: Այս տարի ինչ-որ չափով փոխվեց գրական տոնի ձևաչափը՝ ընդլայնելով մասնակիցների թիվը: Գրական կազմակերպության առաջարկությամբ և ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հանձնարարությամբ Արցախի հանրակրթական գրեթե բոլոր դպրոցներում տեղի ունեցան Մուրացանյան օրերին նվիրված հանդիսություններ՝ գրողների մասնակցությամբ:

Մայիսի 28-ին, արդեն 30-րդ անգամ, մեծ դասականի ծննդավայր Շուշիում, Մուրացանի անունը կրող դպրոցում կրկին հավաքվել էին գրողներ, գիտնականներ, մտավորականներ, դպրոցականներ, հասարակության ներկայացուցիչներ, մայր Հայաստանից ժամանեց գրողների ու գրականագետների մի խումբ՝ Արտեմ Հարությունյան, Արքմենիկ Նիկողոսյան, Հասմիկ Հակոբյան, Արմեն Ավանեսյան, Աշոտ Գաբրիելյան: Ծաղիկներ դրվեցին գրողի կիսանդրուն: Ապա ԼՂՀ ԳՄ նախագահ Վարդան Հակոբյանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ Մուրացանի ստեղծագործություններում առաջադրված խնդիրների մեջ կարևորագույն տեղ ունի առաքելության գաղափարը: Հենց այն հանգամանքը, որ Մուրացանն ամեն տարի Արցախում իր շուրջն է համախմբում հայոց աշխարհի լավագույն գիտնականներին, գրողներին, մտավորականներին, այդ առաքելության լավագույն արտահայտություններից մեկն է:

«Մուրացանը մեր պատմավիպասանության մեջ մնաց որպես անգերազանցելի վարպետ՝ առաջին հերթին իր արծարծած թեմաներով, ազգային միաբանության գաղափարով: Մենք, որ մեծացել ենք Մուրացանի ստեղծագործությունների ոգով, նրա հերոսներին տեսանք մեր շրջապատում, մեր ընկերների մեջ: Մուրացանի գեղագիտությունն այսօր էլ արդիական է ու իր դասն է բերում մեր ժողովրդի առաջընթացի գործում: Ուրախությամբ ենք ամրագրում, որ այսօր նրա գաղափարներն արդեն իրականություն են դարձել, և մեր մեծագույն ձեռքբերումը մեր ժողովրդի անկախությունն է»,- նշեց Վ. Հակոբյանը:

Մուրացանյան օրերի առթիվ ՀՀ ԳՄ նախագահ Լևոն Անանյանի հղած ուղերձը ջերմությամբ ընդունեցին ներկաները: Այնտեղ մասնավորապես ասված է. «Արդեն երեք տասնամյակ անընդմեջ Արցախի գրողների միությունը պետության աջակցությամբ կազմակերպում է «Մուրացանյան օրեր» փառատոնը՝ ամեն անգամ նորովի և ուշագրավ լույսի ներքո ներկայացնելով ու մեկնաբանելով մեծանուն արձակագրի կյանքն ու գործը:

Այն, ինչ տվեց ծննդավայր Արցախն ու արցախցին՝ «բարոյական արժանավորության» իր բնորոշ որակներով (հայրենասիրություն, անձնազոհություն, կամք, առաքինություն, պատասխանատվություն հայոց պատմության և ներկայի հանդեպ), Մուրացանը լիուլի վերադարձրեց իր ծնող ժողովրդին՝ դառնալով նրա գրական-մշակութային ժառանգության հզոր վեմերից:

Դուք վերահաստատում եք ժողովրդական առածի ճշմարտացիությունը՝ «Խաչը տերն է զորացնում», ուրեմն՝ հարգանք ու խոնարհում փառատոնի կազմակերպիչներին, ձեզ բոլորիդ:

Հավատացեք, ես մտովի ձեզ հետ եմ թե՛ Շուշիում՝ գրողի կիսանդրուն ծաղիկներ դնողների շարքում, թե՛ «Գրիգոր Նարեկացի» համալսարանում գիտաժողովի նիստերին, որի «Արդի հայ պատմավիպասանության զարգացման միտումները» թեման հույժ այժմեական է, թե՛ աշակերտների հետ կուսապատյան ձեր հանդիպմանը»:

Բանասիրական գիտությունների թեկնածու Արմեն Ավանեսյանն իր ելույթում անդրադառնալով Մուրացանի ստեղծագործություններին՝ ասաց, որ հայրենասիրությունը նրա մոտ հստակ բանաձևի մեջ է ներկայանում: Նա հայրենիքի սկիզբը համարում էր ընտանիքը. «Մենք այսօր պետք է կարողանանք պահել հայ ընտանիքը՝ հայի տեսակը պահպանելու համար: Սա մուրացանյան կարևոր խորհուրդներից է: Մշակութային բոլոր միջոցառումները կարևոր են հատկապես նորանկախ երկրների համար: Այս առումով մեծ է ու նշանակալից Մուրացանյան օրերի կազմակերպումը սերունդների փոխկանչն ապահովելու համար»:

Տոնակատարություններին մասնակցեց նաև ԼՂՀ ԳՄ հրավերով Արցախում գտնվող գիտնական ու բանաստեղծ, հայ ժողովրդի ռուս բարեկամ Վլադիմիր Պոնոմարյովը: Հեռավոր Սիբիրից բերած ողջույնները հաղորդելով ներկաներին՝ նա միջոցառման մասնակիցների ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ ռուս ընթերցողն առանձնահատուկ վերաբերմունք ու սեր ունի հայ գրականության, մասնավորապես, դասականների ստեղծագործությունների նկատմամբ, որի մեծ մասն այսօր թարգմանված է ռուսերեն:

Այնուհետև Շուշիի Մուրացանի անվան դպրոցում տեղի ունեցավ գիտաժողով, որտեղ հնչեցին Մուրացանի գրական ժառանգությունը գնահատող զեկուցումներ: Բանախոսներն էին գրականագետներ Զինաիդա Բալայանը, Արմեն Ավանեսյանը, գրող, լրագրող Դավիթ Միքայելյանը և ուրիշներ: Գիտաժողովն ամփոփեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բանաստեղծ Սոկրատ Խանյանը. «Մենք ոգեղեն ժողովուրդ ենք, մեզ հոգևոր հաց է պետք: Մեր ոգեղենության ապացույցներից մեկն էլ Մուրացանյան օրերի կազմակերպումն է: Մուրացանը քայլող դասական է: Նա այսօր էլ նպաստում է մեր եռամիասնությանը: Փա՛ռք Մուրացան ծնող մեր ժողովրդին»:

Օրվա միջոցառումներն ամբողջացան Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում՝ մոմավառությամբ:

Մուրացանյան օրերի շրջանակներում մայիսի 29-ին Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում կայացավ գիտաժողով՝ «Արդի հայ պատմավիպասանության զարգացման միտումները» թեմայով, որը վարեց բանասիրական գիտությունների թեկնածու Արքմենիկ Նիկողոսյանը: Զեկուցումներով հանդես եկան բանասիրական գիտությունների թեկնածու Արմեն Ավանեսյանը («20-րդ դարավերջի պատմավիպասանությունը»),

Կիմ Գաբրիելյանը («Լևոն Խեչոյանի «Արշակ արքա և Դրաստամատ Ներքինի» վեպը»), բանաստեղծ Աշոտ Գաբրիելյանը («Զորայր Խալափյանի «Վասիլ Մեծ» պատմավեպը»), Գրիգոր Նարեկացի համալսարանի դասախոս Ամալյա Գրիգորյանը («Արդիականության և պատմականության խնդիրը Մարտիրոս Ոբնի «Դժոխքից եկածին հարցեր չեն տալիս» վեպում»), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը («Արցախյան մեկ դարը Վարդան Հակոբյանի «Զատիկը ջրավազանի հատակին» վեպում»), բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նարինե Հովհաննիսյանը («Հոգևոր երկփեղկվածության հիմնախնդիրները կամ դարձի ճանապարհը Մուշեղ Գալշոյանի վիպաշխարհում»), Ժաննա Բեգլարյանը («Հայկ Խաչատրյանի պատմավիպասանության որոշ միտումներ»), գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը («Հայ դասական և արդի պատմավիպասանության տիպաբանական առանձնահատկությունները»):

Արքմենիկ Նիկողոսյանը նշեց, որ այս տարի Մուրացանյան օրերի շրջանակներում նորություն էր գիտաժողովային ձևաչափը, որտեղ փորձ արվեց կապ հաստատել Մուրացանի և արդի հայ պատմավիպասանության միջև: Կարևորելով գիտաժողովի նշանակությունը՝ Ա. Նիկողոսյանն ընդգծեց, որ այն նպատակաուղղված շեշտադրում ունի, ինչն էլ ավելի առարկայական տեսք կստանա: Առաջիկայում զեկուցումները կհրատարակվեն առանձին գրքով:

Գրականագետ Հասմիկ Հակոբյանը, կարևորելով Մուրացանյան օրերը հայ գրական կյանքի աշխուժացման գործում, նշեց գիտաժողովի դերակատարության մասին: Ըստ նրա՝ միաժամանակ արծարծվեցին երկու կարևորագույն խնդիրներ. խոսվեց և՛ Մուրացանի ստեղծագործությունների, և՛ ժամանակակից հայ պատմավեպի առջև ծառացած խնդիրների ու առանձնահատկությունների մասին:

Մուրացանյան օրերի մասնակիցները եղան հինավուրց Ամարասի եկեղեցում, ապա՝ Սխտորաշենի պատմական սոսենու մոտ, որին անդրադարձել է Մուրացանն իր ստեղծագործություններում, հիացան Արցախի պատմամշակութային հուշարձաններով և անզուգական բնությամբ:

Մայիսի 30-ին միջոցառումները շարունակվեցին Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում, որտեղ ժամանակին հաճախ էր լինում Մուրացանը: Կուսապատի գերեզմանատանն է ամփոփված մեծ գրողի մայրը: Ասենք նաև, այս գյուղի ծնունդ է Մուրացանի կին Ոսկին, այս գյուղում է հարսնություն արել գրողի քույր Ղումաշը:

Մուրացանյան օրերին Կուսապատն ուրախանալու ևս մեկ առիթ ուներ. նշվում էր դպրոցի 135-ամյակը:

Տոնակատարություններին մասնակցելու էին եկել դպրոցի նախկին շրջանավարտներ: Կուսապատցի բարերար՝ ռուսաստանաբնակ Միքայել Մարությանն ամեն անգամ հպարտ զգացումով է ոտք դնում հարազատ կրթօջախ և ոչ դատարկաձեռն. այս անգամ նա համակարգիչներ նվիրեց դպրոցին, ունի և այլ ծրագրեր:

Դպրոցի 135-ամյակի և Մուրացանյան օրերին նվիրված ցերեկույթում ելույթ ունեցան ԳՄ նախագահ Վարդան Հակոբյանը, Մարտակերտի կրթության բաժնի վարիչ Ժասմեն Դավթյանը, դպրոցի տնօրեն Անյուտա Խաչատրյանը և ուրիշներ: Գրականագետ, ՀՀ մշակույթի նախարարության գրքի և հրատարակչական գործի կենտրոնի հրատարակչական բաժնի պետ Արմեն Ավանեսյանը կուսապատցիներին խոստացավ իր նախաձեռնությամբ գրքահավաք կազմակերպել և նոր գրքեր նվիրել դպրոցի գրադարանին:

Դպրոցի կամարների ներքո աշակերտների շուրթերից հնչեցին Մուրացանի բյուրեղացած մտքերը, մեծարման ու գնահատանքի խոսքերով մեկ անգամ ևս արժևորվեց մեծ գրողի վաստակը:

Իր տպավորությունների մասին այսպես է պատմում բանաստեղծ Աշոտ Գաբրիելյանը. «Արցախն ինձ համար չափազանց թանկ է: Արմատներով կապված լինելով Արցախի հետ՝ մանկության օրերին հաճախ էի այցելում այստեղ, և կարելի է ասել, որ այս հողն էլ է սնել իմ պոեզիան: Մուրացանյան օրերը լայն հնարավորություն են ընձեռում Արցախի և Հայաստանի, ինչու չէ, նաև Սփյուռքի գրողներին՝ միմյանց հետ անմիջական շփում ունենալու: Ճանաչելով միմյանց՝ լրացնում ենք մեկս մյուսին: Սա շատ կարևոր քայլ է հայ գրականության ապագայի համար»:

Բանաստեղծ Արտեմ Հարությունյանը Մուրացանյան օրերը կարևորեց փորձի փոխանակման և գրականության տարածման տեսանկյունից. «Սա դպրոց է երիտասարդ սերնդի համար: Ժողովուրդն այս կերպ հաղորդակից է դառնում դասական և ժամանակակից գրականությանը, Արցախն ինձ համար հայոց հողի թագն է, իմ ծնողների բարությունն ու պապիս իմաստությունը»:

Արցախը հպարտ է իր տաղանդավոր զավակներով: Եվ ինչպես Վարդան Հակոբյանն է ասում, նահատակվածների արյամբ ազատագրված հողի վրա ամուր կանգնելն ու այն պահպանելը նույնպես հերոսություն է: Եվ օրինաչափ է, որ Արցախում մեծ դասականի արվեստի օրերն ամեն տարի նշվում են որպես Մայիսյան տոների շարունակություն: Մայիսը մեր ժողովրդի համար հաղթանակների ամիս է:

Եվ թող մշտապես շարունակական լինեն մեր հաղթանակները:

Զարինե ՍԱՌԱՋՅԱՆ

135-ԱՄՅԱԿ

ԿՈՒՍԱՊԱՏԻ ԴՊՐՈՑԸ

Ծեր Կուսապատի լեռնաստորոտում
Դու աչք ես բացել, հարազատ դպրոց,
Մարդկանց սրտերը լուսավորելու
Գիտելիքների դու մեծ զինանոց:
Անցել են կյանքիդ պայծառ օրերը,
Բայց դու կանգուն ես առմիշտ մնացել,
Սիրելի դպրոց, մեծ հոբելյանիդ
Քո սաներն են արդ ներկայացել:

Արտավազդ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Յուրաքանչյուր ազգ յուրովի է կերտում իր մշակութապատմական կեցությունը՝ նաև այդկերպ ստեղծելով համամարդկային արժեքները: Մշակույթի, կրթության ու գիտության համակցության ու ներդաշնակության արդյունքում գծագրվում է ազգի դեմքը, նրա ինքնատիպությունը քաղաքակրթության պատմության մեջ:

Կուսապատի հինավուրց կրթօջախը նշեց իր 135-րդ տարեդարձը: Հիրավի, պատկառելի թիվ, որ կրկին համոզում է, որ հայ դպրոցը որպես ազգի կենսագործունեության յուրատեսակ ձև, շարունակում է ապրել ու արարել բառի լայն իմաստով: Մեր ազգի պարագայում կրթական գործոնը միշտ ունեցել է գաղափարական ու քաղաքական նշանակություն:

Կուսապատը ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Ջիվանշիրի գավառի ամենահին պատմական բնակավայրերից է: Անհիշելի ժամանակներից գյուղում գործել է եկեղեցական ծխական դպրոց: Ուսուցիչը որպես քահանա, նպատակ է ունեցել եկեղեցական սպասավորներ պատրաստել:

Արխիվային տվյալների համաձայն, 1873թ. Կուսապատ գյուղում բացվել է մասնավոր նախակրթարան՝ 25 աշակերտով: Պարապմունքները վարում էր Երիցվանքում կրթություն ստացած Կոսունց Հայրապետը, որի տան սենյակներից մեկում էլ անց էին կացվում դրանք:

1875-1876 ուստարում Կուսապատում բացվել է միդասյա ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր մեկ ուսուցիչ:

1878թ. Կովկասի ուսումնական վարչության թույլտվությամբ գյուղում բացվել է երկդասյա ծխական դպրոց՝ 88 աշակերտով, որը և համարվում է դպրոցի ծննդյան տարեթիվը: Ուներ երեք բաժանմունք, երեք ուսուցիչ: Դպրոցի տնօրեն է նշանակվել էջմիածնում կրթություն ստացած վարդապետ Հովսեփ Փինջինյանը:

Հետաքրքրական է, որ այստեղ ուսուցումը տարվում էր ոչ միայն հայոց, այլ նաև ռուսաց լեզվով: Կուսապատի բնակչությունը ամենայն նվիրվածությամբ օգնում էր դպրոցին:

1890-ական թվականների կեսերին, երբ փակվում են հայկական դպրոցները, այստեղ գործել է պետական դպրոցը: Այն ուներ երկու բաժանմունք՝ հինգ դասարանով, 100 աշակերտ, չորս ուսուցիչ:

Ուշագրավ է այն, որ 1901թ. Կուսապատում բացվել է նաև աղջիկների հայկական դպրոց՝ երեք բաժանմունքով: Պարապմունքները տարվել են հասարակական-քաղաքական մեծ գործիչ Ալեքսանդր Բեկզադյանի տանը, պետությունից գաղտնի, Շուշիի բարեգործական ընկերության հաշվին: Այն ուներ երկու բաժանմունք, իսկ աշակերտների թիվը հասնում էր 30-ի: Այստեղի երկդասյա դպրոցում դասավանդում էին հայոց, ռուսաց լեզուներ, Հայաստանի և Ռուսաստանի պատմություն, աշխարհագրություն, քերականություն, վայելչագրություն, կրոն, երգ, արվեստ, իսկ աղջիկների դպրոցում, բացի այդ առարկաներից, ուսուցանում էին նաև ձեռագործություն:

1906թ. տվյալներով, երկդասյա ծխական դպրոցը դառնում է միդասյա երկսեռ, որտեղ սովորում էր 53 աշակերտ, որից 24-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Աբգար Տեր-Առաքելյանը:

1908-1909 ուստարում դպրոցն ուներ 66, իսկ 1917թ.՝ 77 աշակերտ: Այն պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ կուսապատցիների Հայրենակցական միության նպաստով (տարեկան 300ռ.) և աշակերտների ուսման վարձով:

Ուսման տենչ Կուսապատում միշտ էլ եղել է, բայց սովորելու հնարավորություն ունեցել են միայն ունևորները, որոնք մեկնել են Ռուսաստան և եվրոպական երկրներ՝ ուսում ձեռք բերելու համար:

Հիշենք թեկուզ Հովսեփ Աթաբեկյանին, որը թարգմանել է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» մի քանի գլուխ:

1921թ. դպրոցը դառնում է տարրական, իսկ 1931-32 ուստարում՝ 7-ամյա: 1936-37 ուստարուց դպրոցը գործում է որպես միջնակարգ: 1937 թվականից մինչև մեր օրերը կրթօջախը թողարկել է շուրջ 1400 շրջանավարտ, որոնցից մոտ 300-ը ստացել են բարձրագույն կրթություն՝ տարբեր մասնագիտություններով:

Դպրոցում սովորում էին ոչ միայն Կուսապատի, այլև հարևան գյուղերի՝ Ն. Հոռաթաղի, Ծաղկաշենի, Մոխրաթաղի, Մեծ Շենի, Գյուլաթաղի, Ջանյաթաղի, Մեհմանայի և մի շարք այլ գյուղերի աշակերտներ:

1937-ից միջնակարգ դպրոցի տնօրեններ են եղել Ռուբեն Անաստասյանը, Աշոտ Համբարձումյանը, Վլադիմիր Անաստասյանը, Արշավիր Առստամյանը, Արշակ Գաբրիելյանը, Արամ Գասպարյանը, Հունան Հովհաննիսյանը, Լևոն Հովհաննիսյանը, Էմմա Հովհաննիսյանը, Խրիստո Քսիպտիրիդիսը, Սերգեյ Գրիգորյանը (մոտ 20 տարի), Սվետլանա Գասպարյանը, Սուրեն Սարգսյանը, Կոլյա Բաբայանը, Վանյա Մաթևոսյանը, Արցախյան գոյամարտից հետո՝ Ռազմիկ Ստեփանյանը, Սվետլանա Պողոսյանը, Վահրամ Գևորգյանը, իսկ 1999-ից մինչ այսօր՝ Անյուտա Խաչատրյանը:

Աշխատել են վաստակաշատ ուսուցիչներ՝ Ավագ Չալյան, Ջինավոր Թադևոսյան (Ջինթադե), Արփենիկ Չալյան, Աստղիկ Եղիազարյան, Արաքսյա Հովսեփյան, Աշոտ Բաբայան, Արտավազդ Խաչատրյան, Աբրահամ Մարդյան, որը երկար տարիներ եղել է դպրոցի ուսմասվարը, Կատյա Խաչատրյան, Ասյա Հարությունյան, Աիդա Գրիգորյան, Մելանյա Մկրտումյան, Տանյա Եղիազարյան, Գուրգեն Հարությունյան և ուրիշներ:

Գյուղը ծնել և դաստիարակել է մի շարք նշանավոր մարդկանց՝ Զրաբերդի Մելիք Վանին և իր եղբայր Հակոբ Աթաբեկյանը (ռազմագետ, ցարի կողմից արժանացել է մի շարք պարգևների), Լևոն Աթաբեկյան՝ ժամանակավոր կառավարության ֆինանսների նախարար, բժիշկ, հրապարակախոս, գրող (Բաքվում սպանվեց մուսավաթականների կողմից), Ալեքսանդր Բեկզադյան (Լենինի զինակից, 1-ին հանրապետության արտգործնախարար, Հայաստանի դեսպանը Նիդեռլանդներում և Նորվեգիայում), եղբայրը ՀՅԴ ակնառու դեմքերից է եղել: Պետական գործիչներ՝ Ջիլֆի Հարությունյան, Բագրատ Անաստասյան, Արտեմ Պողոսյան, Կոլյա Ավագիմյան: Գիտական աշխատողներ՝ Գուրգեն Անտոնյան՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Լևոն Մայիլյան (Մեծ Շեն)՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սուրեն Անաստասյան՝ անասնաբուծական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հովակիմ Խոնդկարյան՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոխրաթաղ), Անգել Ագրիտով՝ ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, Ալեքսանդր Բեկզադյան՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, Յուրի Անաստասյան՝ ֆիզմաթ գիտությունների թեկնածու: Գրողներ՝ Լևոն Աթաբեկյան, Արշավիր Պետրոսյան, Իլյա Միքայելյան: Ռազմական գործիչներ՝ գեներալ-մայոր Վլադիկ Խաչատրյան, գնդապետներ՝ Աշոտ և Ռաֆիկ Հովհաննիսյաններ, փոխգնդապետ Ներսես Հովսեփյան: Արցախյան շարժման ժամանակ, երբ կազմակերպվում էին շտաբներ, Մարտակերտի շրջանի 1-ին շտաբի պետն էր Վագիֆ Գալստյանը՝ Արցախյան պատերազմի հերոս:

Կուսապատի դպրոցի մասին հարուստ տեղեկություններ են հաղորդում մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիշա Հարությունյանը, Քարահունջ գյուղի կրթօջախի բազմամյա տնօրեն (նախկին), հանրապետության վաստակավոր ուսուցիչ Միքայել Բեգլարյանը, վաստակաշատ մանկավարժ Ռաֆիկ Բաղդասարյանը և ուրիշներ, ովքեր զբաղվել են Կուսապատի դպրոցի հիմնադրման պատմության, ուսուցիչների մանկավարժական գործունեության ու նրանց օրինակելի հարուստ փորձի ուսումնասիրմամբ:

Միքայել Բեգլարյանը, «Իմ սերնդի ճակատագիրը» գրքում անդրադառնալով Կուսապատի կրթօջախին, ծննդյան տարեթիվն ավելի վաղ է համարում: Նրա համոզմամբ՝ դպրոցը հիմնադրվել է ոչ թե 1878-ին, այլ՝ 1874-ին և շատ հարուստ պատմություն ունի: Տեղի մանկավարժները միշտ աչքի են ընկել իրենց առաջադեմ հայացքներով, աշակերտներին կայուն գիտելիքներ հաղորդելով՝ հետևել նրանց ընդունակությունների դրսևորմանը, զարգացրել կրթօջախի ավանդույթները:

Նա հատկապես խոր ակնածանքով է խոսում գյուղի հպարտությունը հանդիսացող Աթաբեկյանների հայրենասիրական մեծ առաքելության, նրանց նվիրումի ու ազգապահպան ձեռնարկումների մասին: Կազմելով Աթաբեկյանների տոհմածառը՝ Միքայել Բեգլարյանը փորձել է հայրենիքին մատուցած ծառայությունների դիմաց արժանին մատուցել և նրանց օրինակն ուսանելի դարձնել երիտասարդ սերնդի համար, հավերժացնել Կուսապատի երևելի զավակների պայծառ հիշատակը: Եվ հմուտ մանկավարժը, մեկ առ մեկ անդրադառնալով նրանցից յուրաքանչյուրին, սկիզբ առած տոհմի նահապետից՝ Հարություն (Թյունի) Աթաբեկյանից մինչև Լևոն Աթաբեկյանը, մեզ հաղորդակից է դարձնում այդ լուսավոր, առաքինի մարդկանց գործունեությանը: Լևոն Աթաբեկյանի «Բանաստեղծություններ» գրքույկն առաջին անգամ հրատարակվել է Բաքվում, 1913թ.: Իսկ 1957թ. հունիսի 26-ին մեծանուն գրող Ավետիք Իսահակյանը նամակով դիմում է «Հայպետհրատ»-ի տնօրենին, որպեսզի լույս ընծայեն հանգուցյալ Լևոն Աթաբեկյանի բանաստեղծություններից մի գրքույկ՝ մոռացության չտալու Լևոն Աթաբեկյանի հիշատակը և մանավանդ ընդառաջելու բազմաթիվ ընթերցողների փափագին, որոնք ուզում են ունենալ նրա բանաստեղծությունները: Գիրքը հրատարակվում է, որտեղ գրված են մի շարք լիրիկական ու խոհական քառյակներ և ապրված գեղեցիկ ոտանավորներ, ինչպես օրինակ՝ նրա «Լաց մի ինիլ» (տե՛ս էջ 12) ոտանավորը: Իրոք, ապրված և շատ գեղեցիկ ոտանավոր:

Ղարաբաղի մելիքությունների մայրամուտի և ռուսական բանակի գործելակերպի ժամանակաշրջանը վեր է հանել ոչ քիչ քաջ տղամարդկանց անուններ: Մելիք Վանի Աթաբեկյանը մեկն է այն արժանավորներից, ում անունը ոսկե տառերով է գրված Կուսապատի պատմության մեջ: Հենց նրա ջանքերով է դպրոցը հարատևել ու պետական կարգավիճակ ստացել, ով այն ժամանակ հանդիսանում էր ռուսական բանակի կովկասյան զորքերի գլխավոր հրամանատարի քաղաքական գծով տեղակալը և գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում ուներ: Իսկ ռուս հայտնի զինվորական պատմաբան Պոտտոյի «Ղարաբաղի առաջին կամավորականները» աշխատության մեջ հեղինակը հաճախակի է անդրադառնում Մելիք Վանու քաջագործությանը: Ըստ հավաստի տեղեկությունների՝ ռուսական բանակի շարքերից զորացրվելուց հետո Մելիք Վանին շուրջ 40 տարի ղեկավարել է Զրաբերդը և որպես ազդեցիկ քաղաքական գործիչ, նշանակալի դերակատարություն է ունեցել գավառի ընդհանուր շահերը պաշտպանելու, թշնամու դեմ պայքարում բնակչության ուժերը համախմբելու, նրա անվտանգությունն ապահովելու գործում:

Հարազատ կրթօջախի պատմությունը անհնար է դիտարկել առանց տարբեր ժամանակներում դպրոցի հետ սերտորեն կապված նշանավոր մարդկանց անունների: Արցախյան պատերազմի տարիներին դպրոցի շենքը հիմնահատակ ավերվել էր: Դպրոցի ներկայիս շենքը վեր է բարձրացել հենց նախկին կրթարանի տեղում: Այն ամբողջովին կառուցվել է Լոս Անջելեսի «Հայրենիք» բարեգործական միության ջանքերով: Այս գործում անհամեմատ մեծ է Սուրեն Գալստյանի և Գրիգորի Միրզոյանի դերը, ովքեր Արցախյան շարժման ակտիվ մասնակիցներից և առաջնորդներից են:

Գյուղը հավերժի ճամփորդ է դառնում իր նվիրյալ զավակներով, որտեղ էլ որ նրանք ապրելիս լինեն: Մեզ համար, հիրավի, ցանկալի է հիշել, մի այնպիսի կուսապատցու անուն՝ ինչպես Միքայել Մարությանն է, որը թեկուզ ապրում է հեռավոր Օրենբուրգում, սակայն ուշքն ու միտքը, սիրտն ու հոգին իր ծննդավայրի հետ է, որտեղ լսել է իր մայրական օրորը, ավարտել միջնակարգը, գտել իր գիտակցական կյանքի ուղին ու երբեք չի մոռանում գյուղը: Նրա սերն ու կարոտը գյուղի հանդեպ արտահայտվեցին իր իսկ միջոցներով կառուցված՝ գյուղամիջում կանգնեցված զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանը, կրթօջախի 130-ամյակի կապակցությամբ դպրոցի բակում կանգնեցված՝ երգի փոխված հուշաղբյուրը, Մուրացանի կիսանդրու վերականգնումը դպրոցի բակում և դրա հետ կապված միջոցառումներ ու մրցանակաբաշխություններ, երեխաների տարեվերջյան էքսկուրսիաների կազմակերպում դեպի Գանձասար և այլն:

Անցած ուսումնական տարվա մայիսին էլ, հուրախություն կուսապատցիների, նրա միջոցներով ստեղծվեց այն համացանցը, որ մեր չնաշխարհիկ, հինավուրց, բայց գողտրիկ գյուղը կապեց արտաքին աշխարհի հետ: Իսկ այսօր նրա կողմից ևս մի հաճելի անակնկալ մատուցվեց դպրոցին. այս անգամ արդեն իր կամեցող, ազնվագույն գործընկերների հետ միասին կահավորվեց մի ամբողջ համակարգչային դասասենյակ՝ ժամանակի պահանջները բավարարող բոլոր պարագաներով:

Սիրելի բարերարներ, դուք օրհնված եք, քանի որ Կուսապատի դպրոցը շեն ու առողջ պահելու փոքր ու մեծ ձեռնարկումները հաստատում են, որ դուք ոգու, գաղափարի և ճշմարիտ արժեքների ջատագովներ եք: Դուք ամուր եք կանգնած մեր գյուղի դպրոցի փառավոր անցյալում իրենց ծանրակշիռ ներդրումներն ունեցած անհատների կողքին: Անտարակույս, ձեր անունը ոսկե տառերով է գրվելու դպրոցի պատմագրության ու կենսագրության և սովորողների հիշողության էջերում: Ուստի դպրոցի մանկավարժական, աշակերտական և ծնողական կոլեկտիվների կողմից մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ձեզ, քանզի բարեգործությունը երախտագիտությամբ է հիշվում միշտ:

Կուսապատի դպրոցը եղել է, կա ու կլինի: Աշխարհում ծնվում են մի օր, աշխարհից գնում են մի օր: Մենք պետք է ապրենք այնպես, որ մեր հող հայրենին մշտապես լինի մեր մեջ, այլապես կնշանակի, որ մենք չենք ծնվել ու աշխարհից չենք գնացել՝ եթե մենք չենք լինում մեր հայրենի գյուղում: Այո, որտեղ էլ լինենք, ինչ էլ լինի, պիտի ապրենք հանուն Ղարաբաղի և պիտի մշտապես մեր տնկած ծառին մի բուռ ջուր լցնենք: Մենք պիտի մի բեռ հույս պահենք և պիտի մեր բեռից ավելի՝ հավատը պահենք, քանզի հավատի վրա է կառուցված ամեն ինչ:

Անյուտա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կուսապատի միջն. դպրոցի տնօրեն

ԳՐԱԿԱՆ

Կոմիտաս ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԾԱՂԻԿՆԵՐ՝ ՀԱՄՇԵՆԻՑ

(պատմվածք)

Նվիրում եմ մեր անհայտ կորած ազատամարտիկներին, այդ թվում և իմ Նարեկ որդուն



- Չէի՞ր ցանկանա մի անգամ ինձ հետ Թուրքիա գնալ:

- Դրա համա՞ր ես ինձ կանչել,- Նորայրը քմծիծաղ տվեց:- Ի՞նչ եմ կորցրել այնտեղ:

- Իսկ գո՞ւցե կորցրել ես:

- Դե, հա՜, Արևմտյան Հայաստանը:

- Կարող է՝ ոչ միայն դա:

Նա զարմանքով ու տարակուսած նայեց ինձ: Ես մի հայացք ձգելով մեր շուրջը՝ ձայնս իջեցնելով ասացի.

- Այնտեղ հանդիպել եմ մեկին, որը Նվերին շատ էր նման:

- Որտե՞ղ,- արագ հարցրեց:

- Խոփայում. նավահանգստային փոքրիկ քաղաք է Սև ծովի ափին, Բաթումին համարյա թե կպած:

- Գիտեմ,- նա խոժոռ գլխով արեց:- Դու, ինչ է, մորաքրոջդ տղային չե՞ս ճանաչում,- դա այնքան խիստ արտասանեց, որ ես փոքր-ինչ վիրավորվեցի, թեև ցույց չտվի:

- Չգիտե՞ս,- ասացի,- տարիքի հետ մարդիկ փոխվում են: Այն ժամանակ Նվերը տասնութ-տասնհինը տարեկան էր, հիմա…

- Հիմա՝ քառասուն,- Նորայրի ադամախնձորը թեթևակի ցնցվեց:

- Նա էլ այդքան կլիներ: Սիրուն, համակրելի տղամարդ էր: Նա ավելի շատ քեզ էր նման,- ասացի հանկարծակի, գյուտ արածի նման՝ հայացքս հառած Նորայրին:- Ես հենց հիմա տեղը բերի: Լավ հիշում եմ, քսան-քսանհինգ տարի առաջ դու ճիշտ այդպիսին էիր,-գոչեցի ոգևորված:

Նա անհանգիստ շարժվեց աթոռին.

- Բա չհարցրի՞ր, չխոսեցի՞ր հետը:

- Ինչպես չէ, խոսեցի, հարցրի անունը, բայց, կարծում եմ, նա խուսափողական պատասխան տվեց:

- Ի՞նչ ասաց:

- Ասաց՝ Նաթիգ է անունս:

- Հայերե՞ն էիք խոսում:

- Չէ, թուրքերեն:

Նկատեցի՝ ինչպես Նորայրի դեմքով ինչ-որ ստվեր անցավ:

Ջահել, ժպտերես մատուցողուհին մի-մի բաժակ սուրճ դրեց մեր սեղանին:

- Նվերը ո՞ր ոտքից էր վիրավորվել,- զգուշորեն հարցրի,- ա՞ջ, թե՞ ձախ:

Նորայրն անմիջապես չպատասխանեց, հայացքը բևեռել էր անորոշ մի կետի: Ու ես զգացի, թե որքան դժվար է նրա համար խոսել այդ մասին, և ինչպիսի ծանր զգացում էր պարուրել նրան՝ անհայտ ճակատագրի մատնված որդուն հիշելով, թեև նրա դեմքին ոչ մի մկան չէր շարժվում, թեպետ արտաքնապես միանգամայն հանգիստ էր: Երկար ժամանակ չէի հանդիպել Նորայրին ու հիմա գտա, որ նոր կնճիռներ են ավելացել դեմքին: Մի խոսքով՝ նա իր տարիքից ահագին մեծ էր երևում ու երբեմնի պայծառ, կենսախինդ մարդը չէր այլևս:

- Մեզ նման տեղեկություն չեն հաղորդել,- ի վերջո պատասխանեց դժկամ:

Ես ըմպանակից մեքենաբար մի կում անելով, ասացի կամացուկ.

- Այդ տղամարդը թեթևակի կաղում էր աջ ոտքից:

Նա մի երկվայրկյան տատանվեց, հետո ծանր արտաբերեց.

- Ի՞նչ էր նա անում այնտեղ:

- Շուկայում պնդուկ էր վաճառում:

- Պնդո՞ւկ,- Նորայրը սառը ժպտաց և ափով շփեց կզակը:

- Հա, տկողին, տխիլ: «Գրանդ քենդի»-ից տասը տոննայի պատվեր ունեի, պիտի բերեի Երևան: Շուկայի նրանց ունեցածը կշռել-բարձելով, միասին (երկուսով էին) գնացինք մոտակա գյուղը և մնացածը տեղի պահեստից լրացրինք: Գյուղի շրջակա բլուրները պատված էին տխլենու անտառներով: «Դուք այստե՞ղ եք ապրում»,- հարցրի նրանց: «Հա»,- ասաց մյուսը, որ երկար-բարակ բոյ ուներ: Ինքն ամբողջ ճանապարհին լուռ էր, մի բառ անգամ չարտահայտեց: Հարմար պահ որսալով՝ ասացի. «Դուք ոնց որ թուրք չեք»: «Մենք համշենցի ենք»,- պատասխանեց լողլողը ոչ առանց հպարտության: «Համշենահայե՞ր»,- ուզեցի ճշտել: «Ասացի՝ համշենցի»,- կարճ կապեց նա մի այնպիսի տոնով, որ ես այլևս հարցուփորձ չանեմ:

Նորայրը լուռ լսեց, ապա հարցրեց կիսաձայն.

- Այդ ե՞րբ է եղել:

- Մոտ մի ամիս առաջ:

Նա հանդիմանանքով, համարյա նեղացած վրա բերեց.

- Իսկ ինչո՞ւ հիմա ես ասում:

- Չգիտեմ… Տատանվում էի՝ ասե՞լը ճիշտ կլինի, թե՞ չասելը:

- Հո ուրիշ մեկին չե՞ս պատմել:

- Չէ, ի՜նչ ես ասում:

Նա լռեց բավական երկար: Ուշացումով նկատեցի, որ համակ ուշադրությամբ սրճարանում ոչ բարձր հնչող երգն էր ունկնդրում.

…Թե չընկնեմ ես մարտում,
Ա՜խ, իմ մայր թանկագին,
Տուն կգամ ես կրկին,
Կսփոփեմ քո հոգին
Համբույրով սրտագին,
Կսեղմեմ քեզ իմ կրծքին:
Թռչեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն…

- «Մարտիկի երգը»… Դրան ես վաղուց նոր վերնագիր եմ տվել՝ «Նվերի երգը»,- հայացքը փախցնելով, ճիգով խոսեց Նորայրը:

Անկեղծ ասած՝ նրա հուզմունքը համակել էր նաև ինձ:

- Դու ե՞րբ ես գնալու այնտեղ,- անսպասելիորեն հարցրեց:

- Երկու-երեք օրից,- ասացի,- Երևանից «Մանչո գրուպ»-ի զանգին եմ սպասում: Կգա՞ս ինձ հետ:

- Կգամ,- իսկույն պատասխանեց՝ կարճ ու վճռական, ապա խիստ պատվիրեց, որ Գոհար մորաքույրս ոչինչ չպիտի իմանա:- Կասեմ՝ քեզ հետ Ջավախք եմ գնում մի քանի օրով: Այնտեղ եմ, չէ՞, բանակում ծառայել: Կասեմ՝ օր-ծերության կարոտել եմ Աբուլ սարին ու Փարվանա լճին,- նա տխուր ժպտաց:- Ախալքալաքո՞վ չպիտի գնանք:

- Հա, Ախալքալաքով:

- Իսկ փաստաթուղթ-բա՞ն,- նա նայեց ինձ մի տեսակ անօգնական հայացքով:- Չէ՞ որ հայերիս առջև փակ է նրանց սահմանը:

- Դա ինձ թող: Քանի՜ տարի է՝ ամիսը մեկ-երկու անգամ գնում-գալիս եմ: Սահմանը Հայաստանի տարածքով է փակ, Վրաստանով՝ ոնց ջրի ճամփա: Անձնագիրդ հերիք է,- վստահեցրի նրան և սովորության համաձայն սուրճի դատարկ բաժակս շրջեցի պնակի մեջ ու տեսա, որ Նորայրն իր բաժակին ձեռք չէր տվել:

Էլի մի քանի նախադասություն փոխանակելով մեր առաջիկա ուղևորության շուրջ, փողոց ելանք:

- Գուցե ուղեկցե՞մ քեզ,- հարցրի:

Նա բացասաբար շարժեց գլուխը, ձեռքն ինձ մեկնեց և փութկոտ քայլերով հեռացավ: Ասես ուշանում էր ինչ-որ կարևոր հանդիպումից: Ամենայն հավանականությամբ, ցանկանում էր որպե առաջ ներանձնանալ:

Ես հայացքով երկար ուղեկցում էի Նորայրին՝ երկու տասնամյակ առաջ անհայտ կորած որդու արագ ծերացող հորը, զգալով, թե ինչպես է սիրտս բաբախում անսովոր ռիթմով, չէ՞ որ նրա վիշտն ինչ-որ չափով նաև իմն էր: Մտածում էի՝ ճի՞շտ վարվեցի, արդյոք, այդ ամենը նրան հաղորդելով, արժե՞ր քրքրել խեղճ մարդու չսպիացող վերքը: Իսկ եթե հանկարծ նա Նվերը չլինի՞: «Բայց եթե նա Նվե՞րն է»,- հուշեց մի ներքին ձայն…

Մտովի պատկերացրի Նվերին՝ ջահել, կիրթ, լուրջ, մարդամոտ: Օտար լեզվի վերջին կուրսում էր սովորում: Առաջնակարգ մարզիկ էր նաև: Կամավոր եկավ բանակ: Նախ Բեկոր Աշոտի վաշտում էր: Աշոտը նրան՝ որպես նորեկ, մարտի չէր տանում, և Նվերը՝ նեղացած, նորակազմ վաշտ տեղափոխվեց: 1992թ. ամռանը Մարտակերտի շրջանում անփորձ, անվարժ զինվորները շրջափակման մեջ ընկան… Ինչ-ինչ աղբյուրներից իմացվեց, որ Նվերը վիրավորվել էր ոտքից և իբր բուժման էր տարվել Կիրովաբադի ռուսական հոսպիտալ: Մի առ ժամանակ անց լուրեր շրջանառվեցին նրան պատանդ պահելու մասին, հետո՝ այլևս ոչ մի տեղեկություն: «Կարմիր խաչի», մյուս պատկան մարմինների փնտրտուքներն ապարդյուն անցան:

* * *

Երկու օր անց, լույսը դեռ չբացված, ճանապարհ ընկանք:

Մեզ հետ մի ուղևոր էլ էինք վերցրել: Տեղի մանրավաճառներից էր: Նորայրը հետո պիտի ասեր՝ մանրավաճա՞ռ, թե՞ մարմնավաճառ. միակ կատակը, որ հնչեց նրա բերանից այդ չորս օրվա ընթացքում: Նա, ճիշտ է, շատախոս չէր, բայց ճանապարհին ավելի լռակյաց էր դարձել: Խոսում էր առիթից առիթ: Պատճառը գո՞ւցե անծանոթ կնոջ ներկայությունն էր կամ գո՞ւցե թե առաջիկա հանդիպման անորոշությունն էր կաշկանդել նրան: Փոխարենը մեր ուղևորուհին էր չաչանակի պես շաղակրատում: Լավ պահպանված, կանացիությունը դեռևս չկորցրած, անորոշ տարիքի սպիտակամաշկ կին էր, նախկին բաքվեցի, անունը՝ Փերի: Նրա պահվածքից, խոսք ու զրույցից դժվար չէր կռահել, որ թուրքերի մոտ ելումուտ ուներ: Իր ասելով՝ կանացի ներքնաշորերի և արդուզարդի առևտրով էր զբաղվում:

Երբ Աղավնո գետի կամուրջն էինք անցնում, Նորայրն ասաց.

- Հազարամյակներ անց, Տիգրան Մեծից հետո հայոց երկիրն առաջին անգամ որոշակիորեն ընդարձակեց իր տարածքը՝ շնորհիվ արցախցիների: Ջուր չէ Բագրատ Ուլուբաբյանը արցախահայությանը սերմացու ժողովուրդ անվանել:

- Սերմացո՞ւ,- Փերին սրտալի քրքջաց,- ամմա ասել է, է՜:

Հետո թութակի նման էլի ու էլի էր կրկնում և ծիծաղում լիաթոք՝ շաղահարելով փարթամ մարմինը: Կարծես ինչ-որ մեկը մատով ծածուկ, հերթով խտղտացնում էր նրա գերզգայուն անդամները:

Ախալքալաքում Նորայրը վաղեմի կարոտով հիշեց, որ շուրջ քառասուն տարի առաջ ինքը ծառայել է այդտեղ տեղակայված դիվիզիայի տանկային գնդում: Մի քանի հետաքրքրաշարժ դրվագներ պատմեց:

- Զինվորական թաղամասը գետի հակառակ ափին էր,- ասաց,- կամրջով կապված քաղաքի հետ: Հիմա չկա: Սահակաշվիլին չէր հանդուրժել. ռուսներին թողած՝ թուրքերի հետ է եղբայրություն անում հայից պտկված ու իրեն վրացի հորջորջող այդ մանկուրտը:

- Դու խաբել ես մեզ՝ ասելով, թե առևտրական ես,- ծղրտաց Փերին անզուսպ եռանդով,- դու առևտրական չես:

- Ես թուրքական լրտես եմ,- անտարբեր վրա բերեց Նորայրն ու շարունակեց:- Քանի՜ հայկական եկեղեցի են վրացիները սեփականացրել այդ նույն Սահակաշվիլու թողտվությամբ: Այդպես է, ազգուրաց մարդուց, լուսահոգի հորս ասած՝ ամեն տեսակի շանտաժություն կարելի է սպասել:

Ախալցխայի հյուրանոցում, ուր գիշերեցինք, հարկ եղավ մի քանի անհանգիստ ժամ անցկացնել: Նորայրի զարկերակային ճնշումը կտրուկ բարձրացել էր: Իր ամենօրյա դեղերը չէին ազդում: Ու այդտեղ հիշելով, որ երկու անգամ սրտամկանի ինֆարկտ էր տարել, տագնապահար եղա, սաստիկ զարմանալով, որ մինչ այդ երբեք չէի մտածել դրա մասին: Ես ինձ մեղավոր էի զգում նրան փորձության մեջ ներքաշելու համար: «Շտապ օգնություն» կանչեցինք: Եկան, սրսկեցին, ճնշումն իջավ: Բժիշկը հայուհի էր, խորհուրդ տվեց մի քանի օր անկողնում մնալ, մեկուսի հանդիմանելով ինձ՝ էս սրտով նրան էդ ո՞ւր եք տանում:

- Ոչ մի անկողնի,- լուսաբացին կտրականապես հայտարարեց Նորայրը,- գնում ենք: Անհանգստանալու կարիք չկա: Պարզապես հոգնել էի: Տասնհինգժամյա ճանապարհը հո՞ կատակ չէ:

Սարփի անցակետը բարեհաջող անցնելով՝ մտանք Թուրքիա: Նորայրը, որ մինչ այդ բավական լարված վիճակում էր, գոհունակ շունչ քաշեց: «Տեր Աստված,- մտմտում էի ինքս ինձ,- այնպես արա, որ նա Նվերը լինի»:

Ի դեպ, թվում էր՝ թուրք սահմանապահներին ու մաքսատան ծառայողներին բնավ չէին հետաքրքրում իրենց երկիր մտնող մարդիկ, փոխարենը մանրամասնորեն տրանսպորտային միջոցներն էին զննում: Թե՛ այդտեղ, թե՛ Վրաստանում ավտոտեսչի երես չտեսանք, մինչդեռ մերոնք գրեթե ամեն կեռմանում կանգնեցնում էին մեզ:

Փերին երբ իջավ Խոփայում (այնտեղից Տրապիզոն պիտի գնար), Նորայրը տհաճորեն քրթմնջաց.

- Առաջներում հայ կանայք թուրքի ճանկից խուսափելու համար իրենց գցում էին քարաժայռերից կամ գետն էին նետվում, իսկ հիմա իրենք են իրենց թուրքի գիրկը նետում:- Հետո թե՝ եթե 1920 թվականին Սևրի պայմանագիրն ուժի մեջ մտներ, այս հողերը, Տրապիզոնով հանդերձ, մերը կլինեին:

- Գոնե եղածը կարողանանք պահել,- ասացի:- Լսե՞լ ես այս անեկդոտը. Լևոն Ադյանի «Հեռացող եզերք» գրքում եմ վերջերս կարդացել: Եզդին ասում է՝ հայ ժողովուրդը շատ լավ ժողովուրդ. Թիֆլիսը սարքին՝ տվին վրացոց, Բաքուն սարքին՝ տվին ադրբեջանցոց, Երևանն էլ սարքում են՝ տան մեզ, իրենք գնան Ամերիկա:

Նորայրը չարձագանքեց:

- Հասնո՞ւմ ենք,- հարցրեց նա մտասույզ:

- Շուտով,- ասացի:- Մեր առջև նորից ճորոխն է:

- «Աստվածաշնչում» հիշատակված հինգ գետերից մեկն է, որոնք սկիզբ են առնում Հայաստանից:

- Եփրատ, Տիգրիս, Քուռ, Արաքս, Ճորոխ… Ասել է թե՝ դրախտը Հայաստանո՞ւմ է եղել:

- Այդպես է ստացվում:

Շարունակելի

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՐԱԿԱՆ

Ժամանակն իր վախճանին կհասնի,
և Արևը մի բուռ կդառնա:

Մայիս ամսում Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոցի իններորդ դասարանի աշակերտներն այցելեցին Բյուրական: Նպատակը Բյուրականի աստղադիտարանը, Վ. Համբարձումյանի տուն-թանգարանը և գիշերային երկինքը դիտակի միջոցով տեսնելն էր:

Աշակերտների ոգևորությանը չափ ու սահման չկար: Թեև ես պատկերացնում էի, թե ինչ ազդեցություն պիտի ունենա սաներիս վրա Բյուրականի՝ գիտության դարբնոցի կամարների ներքո գտնվելը, որովհետև հասցրել էի ճանաչել այդ մատաղ հոգիներին, սակայն իմ ենթադրածից ավելին էր ազդեցությունը: Աստղագիտության դասերին նրանց պատանեկան մաքուր հայացքներում տեսնում էի տիեզերքի անհիմանալի առեղծվածներին տիրապետելու ձգտումը (նրանցից շատերը երազում են դառնալ տիեզերագնացներ):

Բյուրականն իր ներքին կահավորումով և դարն ապրած սարքավորումներով հիշեցնում է տուն-թանգարան, որտեղ ոչինչ չի փոխվում՝ չխախտելու համար հիշողությունը: Այո, այնտեղ, ինչպես թանգարանում, պահվում է երբեմնի փառքի հիշողությունը, հիշողություն, որ պտտվում է անցած, բայց հավերժ ապրող անունների շուրջը:

Մեր ճամփորդության համար երախտապարտ ենք «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերությանը՝ հովանավորելու խնդրանքը չմերժելու և Քարվաճառի երեխաներին նման հնարավորություն ընձեռելու համար:

Ռ. ՍԵՐՈԲՅԱՆ
Քարվաճառի միջն. դպրոցի
ֆիզիկայի ուսուցչուհի

«ՄԻՀՐ»-Ը ՔԱՐՎԱՃԱՌՈՒՄ

Հանճարեղ Լոռեցու՝ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները հաճախ են տեղ գտել մեր կոմպոզիտորների, կինոռեժիսորների ստեղծագործություններում («Անուշ», «Ալմաստ», «Լոռեցի Սաքոն», «Գիքորը») և իրավամբ համարվել կինոյի և օպերային արվեստի մարգարիտներ: Թատրոնը նույնպես անդրադարձավ Թումանյանի արձակ ստեղծագործություններին: Տաղանդաշատ կինոռեժիսոր Հենրիկ Մալյանը տարիներ առաջ ստեղծեց մի նոր ձևաչափով թատրոն՝ Մալյանի անվան, որտեղ բեմադրվում էին հիմնականում Թումանյանի արձակ ստեղծագործությունները:

Մեր օրերում Երևանում երիտասարդ բեմադրիչների նախաձեռնությամբ սկսեց գործել «Միհր» շարժական թատրոնը, որի գեղարվեստական ղեկավարն է Ցոլակ Մլքե-Գալստյանը: Մեջբերելով ասեմ, որ այս տարի սեպտեմբերին մեզ մոտ վերաբնակեցվեց երիտասարդ մի ընտանիք՝ Դավիթ Եղիազարյան և Թամարա Գրիգորյան ամուսինները: Թամարան ՄՊՍԿ-ի թատրոնի խմբակի ղեկավարն է, և նրա հրավերով մեզ մոտ՝ Քարվաճառում էր երիտասարդ թատերախումբը: Նրանք ներկայացրին Թումանյանի երեք հեքիաթները՝ «Խելոքն ու հիմարը», «Օիտը», «Ոսկու կարասը»: Անշուշտ, առաջնային են հեքիաթների գաղափարները՝ բոլոր իրավիճակներում լինել խելացի, չկորցնել բանականությունը, լինել արդարամիտ և աչք չունենալ ուրիշի ունեցվածքին: Հիշել, որ նյութական գայթակղությունը դժբախտություն է ծնում, կարող է ի չիք դառնալ, իսկ բարությունը, բարի գործն անմահ է:

Այս ամենը մեկ անգամ ևս հիշեցնելու առաքելությամբ էին երիտասարդ դերասանները ներկայացել: Մենք ականատեսը եղանք թատերարվեստի մի նոր ոճի, նոր խոսքի՝ հանդիսատեսին ասելիքն ուղղել շարժումներով, պարային էլեմենտներով: Սրա մեջ կար և՛ մնջախաղ, և՛ պար, և՛ հնարքներ, որոնք միջավայր էին ստեղծում: Եվ այս ամենը միաձուլվում, միս ու արյուն էր դառնում հոգեպարար ու նրբաճաշակ երաժշտության ներքո:

Վստահ եմ, որ «Միհր» թատերախմբի ելույթն իր դերը կունենա մեր երեխաների մեջ գեղեցիկի նկատմամբ վերաբերմունքի, ճաշակի ձևավորման ու զարգացման գործում:

Ուզում եմ Քարվաճառի աշակերտության ու նաև մեծերիս անունից շնորհակալություն հայտնել Թամարային և փոքրիկ այդ թատերախմբին՝ անմոռանալի պահեր պարգևելու համար:

Ասում ենք՝ բարի ճանապարհ, նորից հանդիպելու ակնկալիքով:

Ս. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Քարվաճառի միջն. դպրոցի
ուսուցչուհի

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ

Գործում է «Լուսարար» թերթի կայքէջը՝
www.lusarar.info

Լևոն ԱԹԱԲԵԿՅԱՆ

ԼԱՑ ՄԻ՛ ԻՆԻԼ

Շենի կլխին հանգիստարան,
Քու հար ընդեղ թաղած ա,
Ըսօր-էքյուծ քեզ միար էլ,
Կասին՝ ընդեղ թաղած ա:

Վերջը տա յա,
Լաց մի՛ ինիլ:

Սարի սեռին մին կարմյուր թողպ
Կամանց-կամանց սվացավ.
Մարդի բախտը ըսօր՝ կարմյուր,
Էքյուծ տեսեր, սվացավ:

Բախտը թոխպ ա,
Լաց մի՛ ինիլ:

Ըսօր՝ ջահիլ, էքյուծ՝ պառավ,
Էս հինչ յաման տնազ ա,
Էս աշխարհը լուս ցերեկավ,
Պեց ըշկերավ արազ ա:

Լոխ արազ ա,
Լաց մի՛ ինիլ:

Ջահիլ հարսը սրփած թոր ա,
Հով վեր սաղ ա՝ նրանն ա,
Թա կաս, ըսօր տարը տու ըս,
Էքյուծ տարը դուշմանն ա:

Սերը սոտ ա,
Լաց մի՛ ինիլ:

Հինգյեր-տղան մին ծաղիկ ա,
Այազ տարավ՝ չուրացավ,
Ըսօր խաթրին արյուն կանի,
Էքյուծ տեսեր, մոռացավ:

Ճարտ տու ըս,
Լաց մի՛ ինիլ:

Լափու տվող կետի ճիրան
Քար չըկա վեր չմաշի,
Սերտը քար չի, ըրտսուքան
Ըսօր-էքյուծ կմաշի:

Դարդոտ ախպեր,
Լաց մի՛ ինիլ:

Իրիքնյակը երկինքավը
Իրան միար շոռ ա տամ,
Թա ապրողին, թա մեռածին
Իրան լուսան փայ ա տամ:

Մին հաշեվ ա,
Լաց մի՛ ինիլ:

Կանաչ խութին հանգիստարան,
Քու մար ընդեղ թաղած ա,
Ըսօր-էքյուծ քեզ միար էլ,
Կասին՝ ընդեղ թաղած ա:

Ազիզ ախպեր,
Լաց մի՛ ինիլ:

Խոսք հիշատակի

ԳՐԻՇԱ ՍԵՐՈԲԻ ՂԱԼԱՅԱՆ



Նոր էր նշել իր 60-ամյակը, բայց չհասցրեց վայելել 60-ամյա բարձունքից կյանքին նայելու և այն վերագնահատելու բերկրանքը...

Ապրիլի 22-ին հանկարծամահ եղավ Վանքի Գ. Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի վաստակաշատ ուսուցիչ Գրիշա Սերոբի Ղալայանը:

Տվեց վերջին դասը, հանձնարարեց քննության առաջադրանքները ու գնաց...

Ծնվել է 1953թ. մարտի 13-ին, Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: 1960թ. ընդունվել և 1970թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը:

1971թ. զորակոչվել և ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում:

1974թ. ընդունվել և 1978-ին ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը: Ավարտելուց հետո գործուղվել է Շամխորի շրջանի Մարտունի գյուղ, որտեղ աշխատել է երեք տարի: 1981-86թթ. աշխատել է Մարտակետի շրջանի Քոլատակ, Առաջածոր, Ծմակահող գյուղերի դպրոցներում: 1986թ. սեպտեմբերի 1-ից մինչև իր կյանքի վերջին օրն աշխատել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

1991թ. մայիսի 15-ին օմօնականները նրան գերի են վերցնում: Հանդուգն պահվածքի համար նրան ենթարկում են անասելի տանջանքների. երեք օր տեղից չի շարժվել: Երբ մի օր փոքր ուշքի է գալիս, ազատ են արձակում՝ մտածելով, որ չի ապրի:

Երբ գյուղ վերադարձավ, համագյուղացիները տեսան նրան ենթարկած դաժան խոշտանգումների դրոշմները... Սակայն նա կարողացավ վերագտնել իրեն և շարունակել իր գործունեությունը հայրենի եզերքում:

Սիրում էր իր մասնագիտությունը և մշտապես կատարելագործում իմացությունները: Օժտված էր բարձր գիտակցական կարգապահությամբ, պարտքի ու պատասխանատվության զգացումով: Կատակասեր էր, սրամիտ ու հաճախ էր իր խոսելաոճով գրավում շրջապատին:

Որտեղ էլ աշխատել է Գրիշա Ղալայանը, արժանացել է հարգանքի: Նա ուներ լավ ընտանիք, 3 երեխաների հայր էր և 6 թոռների հոգատար պապիկ:

Գրիշա Ղալայանը բազմակողմանի զարգացած մանկավարժ էր ուներ բազում հետաքրքրություններ, այդ թվում՝ սպորտի և մասնավորապես, շախմատի նկատմամբ: Վերջին մեկ տարում, մասնակցելով դասընթացի և հավաքելով առավելագույն միավոր՝ շախմատ էր դասավանդում դպրոցում և իմաստուն խաղի գաղտնիքներն էր սովորեցնում իր փոքրիկ սաներին:

Գրիշա Ղալայանը միշտ կմնա բոլորիս հիշողության մեջ, և շատ ցավալի է այդ հմուտ և բանիմաց մանկավարժի անժամանակ կորուստը:

Նա գնաց առանց հրաժեշտ տալու, կարծես ունկնդիր մեծն Սևակի պատվիրանին.

Միանգամից... մի վայրկյանում... հանկարծակի...

Մարտակերտի շրջանի Վանքի Գ. Հայրապետյանի
անվան միջնակարգ դպրոցի կոլեկտիվ

ՌՈՒԲԵՆ ՎԱՆԻԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ



73 տարեկան հասակում կյանքին հրաժեշտ տվեց վաստակաշատ մանկավարժ Ռուբեն Վանիի Գրիգորյանը:

Ծնվել է 1939թ. սեպտեմբերի 3-ին, Մարտունու շրջանի Ավդուռ գյուղում: Որպես ռուսաց լեզվի և գրականության մասնագետ՝ նա աշխատել է Հաղորտու, Ավդուռի դպրոցներում, եղել է նաև Մյուրիշենի Ս. Սպանդարյանի անվան կոլտնտեսության վարչության նախագահ:

Իր կյանքի ընկերուհու՝ Ռոզա Շաքարյանի հետ միասին տարիներ շարունակ տքնաջան աշխատանք են կատարել ուսման բնագավառում:

Ռուբեն Գրիգորյանն իր գիտակցական կյանքը նվիրել է մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: Եղել է պահանջկոտ, իր առարկային հրաշալի տիրապետող մասնագետ: Նա երկար տարիներ եղել է Ավդուռի ութամյա դպրոցի տնօրենը:

Ընտանիքում եղել է սիրված ամուսին, նվիրված հայր: Մեծացրել ու դաստիարակել է չորս զավակների:

Կյանքի վերջին տարիներին արդեն քայլում էր ձեռնափայտով, գանգատվում էր արյան ճնշումից, սակայն չէր մոռանում դպրոցը, ուսուցչական կոլեկտիվին: Մասնակցում էր գյուղում կատարվող բոլոր միջոցառումներին:

Նրան միշտ հետաքրքրում էին դպրոցի խնդիրները:

Ռուբեն Գրիգորյանի անունը միշտ կհիշվի գյուղի հասարակության, առանձնապես՝ ուսուցչական կոլեկտիվի կողմից:

Ավդուռի հիմնական դպրոցի
մանկավարժական կոլեկտիվ

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3171: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 15.06.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: